# Ազգ
Azg

29 ՄԱՐՏ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 56(4908)

ISSN: 1829-1651


## «Տերմիտների» վտանգավոր առաքելությունը Հայաստանում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Տերմիտներն ու փայտուտիճները փայտով սնվող միջատներ են: Նրանք 24 ժամ անընդհատ ուտում են: Ջոր փայտի տերմիտները ընդունակ են կառուցելու բներ եւ շենքերում փորելու թունելներ, որոնք հետագայում մեծ վնաս կարող են հասցնել շենքին՝ ընդհուպ դրա փլուզումը: Նման վնասները Մ. Նահանգներում տարեկան մինչեւ 2 միլիարդ դոլարի են հասնում:

Բայց մեր հոդվածի նպատակը միջատների ուսումնասիրությունը չէ: Ոչ էլ նրանց պատճառած վնասների շարադրանքը: Մենք փորձելու ենք օգտագործել տերմիտների համանմանությունը օտար աղանդների հետ, որոնք Հայաստան են ուղարկվում նույնքան վտանգավոր առաքելություն կատարելու:

Կարծես պատերազմը, շրջափակումը, տնտեսական դժվարություններն ու երկրաշարժի շարունակական ավերածությունները բավական չեն, Հայաստանը նաեւ պետք է զինվի՝ պայքարելու համար այդ օտար աղանդների դեմ, որոնք «պաշտամունքի ազատություն» կոչված քողի ներքո երկրի սոցիալական կառուցվածքն են քայքայում եւ կազմալուծում բանակը:

Յոթանասուն տարվա աթեիստական իշխանությունից հետո, որի ընթացքում խախտվեցին հայկական եկեղեցու հիմքերը, Հայաստանը դեռեւս պատրաստ չէ դիմադրելու նման «գրոհը»: Ճիշտ է, կրոնական որոշակի աշխուժություն զգացվում է՝ եկեղեցիներ են կառուցվում կամ վերանորոգվում, հոգեւորականների թիվն ավելանում է եւ այլն, սակայն այդ բոլորը դեռ հեռու են ամոքելու անցյալի վերքերը, մանավանդ հաշվի առնելով, որ նոր մարտահրավերները գալիս են հատուկ առաքելություններով՝ նվաճելու երկիրը:

Ոչ ոք չի հավատում, որ սառը պատերազմն ավարտվել է: Մեր հայրենիքը դեռեւս գտնվում է երկու պատերազմող կողմերի արանքում: Սառը պատերազմի նորագույն զենքերը շատ ավելի «զարգացած» են եւ օգտագործվում են ավելի արդյունավետ ձեւերով՝ վարչակարգեր փոխելու, գունավոր հեղափոխություններ իրականացնելու, կործանարար վերազարթում եւ ավերածություն առաջացնելու համար թիրախ դարձած երկրներում: Ջորջ Սորոսի խաղաղ «հրետակները» հատուկ վարժեցված էին նարնջագույն եւ վարդագույն հեղափոխություններ իրականացնելու համապատասխանաբար Ուկրաինայում եւ Վրաստանում:

Տես էջ 4

## Գործարարներ կան բոլոր կուսակցությունների համամասնական ցուցակներում

### Ամենից շատ «Բարգավաճ Հայաստան», ամենից քիչ՝ «Միավորված հայեր» կուսակցություններում

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Ազգային ժողովում գործարար պատգամավորների առատության մասին մտատպես խոսվել է, նշվել, որ այդ հարցը պետք է կարգավորվի, որ գործարարները կամ պետք է զբաղվեն իրենց բիզնեսով, կամ օրենսդրական գործունեությամբ: Ավելին՝ իշխող Հանրապետական կուսակցության ղեկավարները հայտարարեցին, որ գործարարներն այս ընտրություններին իրենց կուսակցական ցուցակում ընդգրկված չեն լինելու: Սակայն, ինչպես ցույց տվեց իրականությունը, ինչպես իշխող կուսակցության, այնպես էլ իշխանական կոալիցիայի եւ ընդդիմադիր կուսակցությունների ցանկերում ավել կամ պակաս չափով ընդգրկված են գործարարներ: Անգամ կոմունիստական կուսակցության ցուցակում գործարարներ կան:

Նախ հստակեցնենք, թե ի՞նչ ասել է գործարար: Մեզանում գործարար ասելով հասկանում են ոչ միայն բիզնեսի սեփականատերերին, այլեւ գործադիր տնօրեններին, փոխտնօրեններին, կառավարիչներին:

Տես էջ 2

## Ոստիկանության քննիչը ձերբակալվել է կաշառք վերցնելու պահին

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության մամուլի կենտրոնից «Ազգը» տեղեկացավ, որ մարտի 28-ին ԱԱԾ եւ ոստիկանության իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է պաշտոնատար անձի կողմից կաշառակերության դեպք:

Երեւանի «Կենտրոն» ոստիկանության բաժնի հետաքննչական բաժանմունքի հետաքննիչ, ոստ. լեյտենանտ Արթուր Հովսեփյանը, քաղաքացի Հ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու դիմաց նրանից պահանջել է 500 ԱՄՆ դոլար: Գումարը ստանալու պահին հետաքննիչը ձերբակալվել է:

Նախապատրաստվում են նյութեր Արթուր Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 311 հոդվածի (կաշառք ստանալը) հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար:

Ս. Մ.

## Եղեռնի 97-ամյակի հիշատակում «Թայմս սքվերում» ապրիլի 22-ին

Կանադայում հրատարակվող «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի մարտի 5-ի անգլերենի բաժինը տեղեկացնում է, որ այս տարի 27-րդ անգամ հազարավոր հայեր եւ նրանց օտարազգի աջակիցներ հավաքվելու են «Թայմս սքվերում» (Մ. Նահանգներ)՝ նշելու Մեծ եղեռնի 97-րդ տարելիցը:

«Թուրքիան մեղավոր է ցեղասպանություն իրականացնելու համար: Անժխտելին ժխտելը ոճրագործություն է»՝ ընդհանուր կարգախոսի ներքո անցկացվելիք հուշահավաքը տեղի է ունենալու կեսօրից հետո ժամը 2-ից 4-ը, որի ընթացքում ներկաները հնարավորություն են ունենալու լսելու ինչպես ծերունազարդ ականատեսների վկայությունները, այնպես էլ հրավիրված բանախոսների՝ դոկտ. Դենիս Փափազյանի, դոկտ. Արթուր Կուբիկյանի եւ այլոց ելույթները:

Միջոցառման կազմակերպիչներն են «Վարդանանց ասպետների եւ դուստրերի» միջազգային մասնաճյուղերը, համահովանավորությամբ ՀԲԸՄ-ի, Ամերիկայի հայկական համագումարի, Ամերիկայի հայ ազգային կոմիտեի, Ամերիկայի հայկական խորհրդի եւ Ռ. Ա. կուսակցության: Մասնակցում են նաեւ Հայ եկեղեցու բոլոր հարանվանությունները եւ երիտասարդական միությունները:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

## Մայրաքաղաքի սեյսմիկ ռիսկը՝ խիստ բարձր

### Գոյություն ունեն 4-րդ աստիճանի վթարայնության 15, 3-րդ աստիճանի՝ 300 բազմաբնակարան շենքեր

Երեկ տեղական ժամանակով ժամը 11:43-ին Արտաշատ քաղաքից 5 կիլոմետր դեպի հյուսիս տեղի է ունեցել 2.7 մագնիտուդով երկրաշարժ: Արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության տվյալներով՝ երկրաշարժի ուժգնությունը էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ: Ցնցումները զգացել են ոչ միայն Արտաշատում, այլեւ Վերին Դվինում եւ Այգեստանում: Սա վերջին 10 օրվա ընթացքում Հայաստանում գրանցված երկրաշարժի երկրորդ դեպքն է: Անցած կիրակի 2.5 մագնիտուդով երկրաշարժ էր տեղի ունեցել Գավառից 20 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք:

Հայաստանի՝ սեյսմավտանգ գոտում լինելը միշտ եղել է անհանգստության առարկա, սակայն Սպիտակի երկրաշարժից եւ հատկապես վերջին մի քանի ամիսներին անընդհատ կրկնվող երկրաշարժերն ու դրանց ֆոնին մայրաքաղաքի կառուցապատումը բազմաթիվ մտահոգությունների պատճառ են դարձել:

Թեմայի վերաբերյալ եղել են բազմաթիվ քննարկումներ, հանդիպումներ, նախաձեռնություններ, սակայն էական փոփոխություններ չկան:

Երեկ նման քննարկում էր կազմակերպել նաեւ «Նովոստի» ակումբը: Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության սեյսմակայուն շինարարության կենտրոնի ղեկավար **Զավեն Խլղաթյանն** ընդգծեց, որ խորհրդային տարիներին կառուցված շենքերի 95 տոկոսը չի բավարարում ժամանակակից նորմերի պահանջները:

«Այսօր Երեւանում գոյություն ունի 4-րդ աստիճանի վթարայնության մոտ 15 շենք, որոնք քանդման ենթակա են, եւ երրորդ աստիճանի վթարայնության ավելի քան 300 բազմահարկ շենք, որոնք պետք է ամրացվեն: Սեյսմակայունության առումով հատկապես աղետալի վիճակում է մայրաքաղաքը»:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամալյանի մեկնաբանությամբ՝ առանց խաղահրապարակների եւ հանգստյան գոտիների կառուցապատումը սխալ է: «Քաղաքացիների համար մայրաքաղաքը շատ անհարմար է կառուցված, քանի որ տեղաշարժվելը շատ դժվար է: Ոչ միայն Երեւանի բազմաբնակարան շինությունները, այլեւ Երեւանի ընդհանուր շենքերի սեյսմիկ ռիսկը շատ բարձր է գնահատվում:

Տես էջ 2

## Կյանքին հրաժեշտ տվեց Ալեքսանդր Հարությունյանը



Կյանքի 92-րդ տարում վախճանվեց հայ նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը՝ ժամանակակից հայ դասական երաժշտության մեծերից մեկը: Ստեղծագործական կյանքի տեւական շրջանը բեղուն էր, բազմերանգ, որ կայացավ հայ եւ համաշխարհային երաժշտական մշակույթի հարուստ ժառանգության վրա: Իր գործերը նա հարստացրեց նաեւ հայ ժողովրդական եւ աշուղական երգերի ինքնատիպ մեղեդայնությամբ:

Ալ. Հարությունյանի վաստակը հայ երաժշտական արվեստի զարգացման գործում հիրավի անգնահատելի է. 1954-ից մինչեւ 1990 թվականը նա Հայֆիլհարմոնիայի անփոփոխ գեղարվեստական ղեկավարն էր, 1962-ից դասավանդել է Երեւանի պետական կոնսերվատորիայում: Երաժշտական հարուստ ժառանգություն թողեց կոմպոզիտորը՝ «Տոնական նախերգանք» կոնցերտը, «Սիմֆոնիա»-ն, «Հայկական ռապսոդիա» (համահեղինակ՝ Ա. Բաբաջանյան) երկու դաշնամուրի համար, «Հայաստանի պարերը» սիմֆոնիկ սյուիտը, «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ պոեմը, Կոնցերտ-ֆանտազիա 5 փողային նվագարանների համար, «Սայաթ-Նովա» քնարական-դրամատիկական օպերան (վերջինիս նոր բեմականացումն իրականացվեց անցած տարի), Սպիտակի երկրաշարժին նվիրված «Հայաստան-88» ջութակի կոնցերտը, որոնք համարվում են նրա լավագույն գործերից:

Ալ. Հարությունյանի երաժշտությունը բնորոշվում է ընդգծված արտահայտչականությամբ, զգացմունքայնությամբ, մեղեդիական լայն շնչառությամբ, դրամատիզմի տարրերով, գունային եւ ռիթմային հագեցվածությամբ: Ոչ միայն Հայաստանում, նաեւ երկրի սահմաններից դուրս նա ճանաչված եւ սիրված կոմպոզիտոր էր, իր ստեղծագործությունները հնչել են միջազգային նշանավոր բեմերում՝ Գերմանիայում, Լեհաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Անգլիայում (Թագավորական սիմֆոնիկ նվագախմբի կողմից նաեւ): Փողային գործիքների համար նրա գրած մի շարք ստեղծագործություններ մտել են համաշխարհային ճանաչում ունեցող կատարողների նվագացանկ:

Կոմպոզիտորի ստեղծագործական վաստակը բարձր է գնահատվել, նա արժանացել է ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման, պետական մրցանակի: Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործությունը հայ երաժշտական մշակույթի պատմության անբաժանելի մասն է ու հարստությունը:

Մ. Բ.

# Ընթացիկ

## Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհը՝ սեպտեմբերին, իսկ Իսակով-Լենինգրադյանը՝ 2013-ի գարնանը

*Երեւանի քաղաքապետն այցելել է ավտոճանապարհների կառուցման շինհրապարակներ*

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, երեկ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը այցելել է նոր ավտոճանապարհների կառուցման շինհրապարակներ:

Երեւանի քաղաքապետը նախ ծանոթացել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Ուլնեցու փողոցից Ռուբինյանց փողոց տանող 2,5 կմ երկարությամբ շրջանցիկ նոր ավտոճանապարհի կառուցման ընթացքին: «Երեւաննախագիծ» ինստիտուտի տնօրենն ու ճանապարհաշինարարը Տարոն Մարգարյանին ցույց են տվել, թե այդ պահին ո՞ր հատվածում են ընթանում հիմնական աշխատանքները, վստահեցրել, որ ավտոճանապարհի մի հատվածը երթեւեկելի կլինի մինչեւ սեպտեմբեր: Շինաշխատանքների երկրորդ փուլով այստեղ նախատեսվում է «Ալմաս» գործարանին հարակից, նախկինում երկաթուղային փոխադրումների համար նախատեսված կամուրջը եւս ներառել տրանսպորտային հանգույցում:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում ճանապարհաշինական մյուս շինհրապարակը, որ այցելել է Երեւանի քաղաքապետը, Ծարավ աղբյուրի փողոցում է: Այդ ճանապարհի կառուցմամբ ոչ միայն կբեռնաթափվեն վարչական շրջանի կենտրոնական փողոցները, այլեւ Քանաքեռ-Զեյթունը կարճ ճանապարհով կմիանա Ավան վարչական շրջանին:

Հաջորդը Տարոն Մարգարյանն այցելել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցը Իսակովի պողոտային կապող ավտոմայրուղու կառուցման շինհրապարակ եւ հետեւել ընթացող աշխատանքներին: Արագընթաց օղակաձեւ մայրուղին անցնելու է Դալմայի այգիների սահմանին հարակից անցումային տարածքով: Համաձայն նախագծի, երկու ուղղություններով 2-ական երթեւեկագոտով ավտոմայրուղու երկարությունը կկազմի 2,6 կմ: Քաղաքապետին զեկուցվել է նաեւ, որ շինաշխատանքների շրջանակում կկառուցվեն շուրջ 1,9 կմ երկարությամբ ուղետարներ, որոնք մի կողմից կմիանան Ծովակալ Իսակովի պողոտային, իսկ մյուս կողմից՝ Լենինգրադյան փողոցին: Ավտոմայրուղին կլինի արագընթաց եւ լուսացույցներ չի ունենա, ինչն, ըստ էության, կբացառի խցանումները, ինչպես նաեւ զգալիորեն կբեռնաթափի ավտոմայրուղուն հարակից փողոցների տրանսպորտային հոսքերը: Տարոն Մարգարյանը հանձնարարել է հատուկ ուշադրություն դարձնել ավտոմայրուղուն զուգահեռ նախատեսվող ջրատարի եւ հեղեղատարի, ինչպես նաեւ արտաքին լուսավորության, կապի հաղորդակցուղիների ստորգետնյա եղանակով կառուցմանը:

Երեւանի քաղաքապետարանի հաղորդագրության մեջ նշվում է, որ ընթացիկ աշխատանքներն, ընդհանուր առմամբ, գոհացրել են քաղաքապետին: «Շրջայցի արդյունքում արձանագրեցինք, որ բոլոր աշխատանքներն ընթանում են նախանշված ժամանակացույցի համաձայն, ինչը գոհացուցիչ է: Սակայն հույս ունենք, որ որոշ աշխատանքներ կավարտենք նախատեսվածից ավելի շուտ, ինչը կնպաստի մայրաքաղաքի երթեւեկությանն օր առաջ բեռնաթափելուն: Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի հիմնական աշխատանքները կավարտվեն արդեն այս տարվա սեպտեմբերին, իսկ Իսակով-Լենինգրադյանում աշխատանքների վերջնաժամկետը սահմանված է 2013 թվականի գարնանը», նշել է Տարոն Մարգարյանը: Քաղաքապետը երեկ ծանոթացել է նաեւ Հալաբյան-Աբելյան փողոցները կապող հատվածում կատարվող աշխատանքներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Գործարարներ կան բոլոր կուսակցությունների համամասնական ցուցակներում

*1-ին էջից*

Բացի նշվածներից, «գործարար» հասկացության մեջ ներառելով նաեւ ընկերությունների հիմնադիրներին, խորհրդի անդամներին, բաժնետերերին, անհատ ձեռնարկատերերին, ստացանք 113 գործարարներ, որոնք ընդգրկված են խորհրդարանական ընտրություններին մասնակցող 8 կուսակցությունների եւ մեկ դաշինքի ցուցակներում: Իսկ ընդհանուր առմամբ, այդ ցուցակներում ընդգրկված են 1028 պատգամավորության թեկնածու: Այսինքն, գործարար թեկնածուները բոլոր թեկնածուների ավելի քան 10 տոկոսն են կազմում:

Ներկայացնենք հերթականությամբ:

«Բարգավաճ Հայաստան կուսակցության» 165 հոգուց ցանկում 39 գործարարներ են ընդգրկված՝ ներառյալ կուսակցության ղեկավարը: Ամենաշատ գործարարներ ընդգրկված են այս կուսակցության ցանկում:

Հաջորդը «Ժառանգությունն» է՝ «Ազատ դեմոկրատների» հետ միասին: Այս ցանկում 73-ից գործարար են 4-ը:

Հայ ազգային կոնգրեսի 122 պատգամավորության թեկնածուներից 9 են ընդգրկված որեւէ բիզնեսում:

Հայ հեղափոխական դաշնակցության համամասնական ցուցակում 88 թեկնածուներից գործարար են 7-ը:

Հայաստանի դեմոկրատական կուսակցությունում 3 գործարարներ կան՝ 45 պատգամավորության թեկնածուներից:

Ինչպես արդեն նշեցինք, անգամ Հայաստանի կոմունիստական կուսակցության ցուցակում կան գործարարներ: Մասնավոր սեփականությունը մերժող կուսակցության 75 թեկնածուներից 2-ը գործարարներ են:

Իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության 253 պատգամավորության թեկնածուներից 23-ը, այնուամենայնիվ, գործարարներ են:

«Միավորված հայեր» կոչվող իրավաբանների կուսակցությունը ԱԺ ընտրություններին իր համամասնական ցուցակում ներկայացրել է 29 թեկնածուների, որոնցից միայն մեկն է գործարար:

Եվ վերջին՝ «Օրինաց երկիր» կուսակցության 178-հոգիանոց ցուցակում ընդգրկված են գործարարությամբ զբաղվող 25 թեկնածու:

Այսպիսով, կարելի է փաստել, որ գործարարները, այնուամենայնիվ, չեն ցանկանում հրաժարվել ԱԺ պատգամավոր դառնալուց, առաջադրվելով ոչ միայն մեծամասնական ընտրակարգով, այլեւ ընդգրկվելով կուսակցությունների համամասնական ցուցակներում: Մյուս կողմից, կուսակցությունները եւս չեն ցանկանում հրաժարվել գործարարներին իրենց շարքերը ներգրավելուց եւ պատգամավորական աթոռ առաջարկելուց, քանի որ դա փոխշահավետ տարբերակ է թե՛ նրանց, թե՛ գործարարների համար:

## Մայրաքաղաքի սեյսմիկ ռիսկը՝ խիստ բարձր

*1-ին էջից*

Այսինքն՝ Երեւանի շինությունները խոցելի են ուժեղ երկրաշարժերի դեպքում», ասաց նա:

Նամալյանի խոսքերով, Երեւանում չկան կոնկրետ խիստ նորմեր, որպեսզի շենքերը, նորակառույցները չկառուցվեն այնքան խիտ՝ սեյսմիկ անվտանգության տեսանկյունից վտանգ ներկայացնելով շրջապատին:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության սեյսմակայուն շինարարության կենտրոնը ճապոնացի մասնագետների հետ համատեղ վերլուծել է Երեւանի կառուցապատման առանձնահատկությունները, տարբաժանել են գոյություն ունեցող բազմաբնակարան շենքերն ըստ տիպային առանձնահատկությունների եւ սեյսմազինվածության պաշարի:

Մասնագետները հանգել են եզրակացության, որ ավանդական մեթոդները կիրառելով հնարավոր չէ ներկայիս բյուջեով որեւէ միջոցառում ձեռնարկել՝ շինությունների ուժեղացման ուղղությամբ: «Այդ պատճառով մասնագետների քննարկման շրջանակներում է նոր տեխնոլոգիաների կիրառումը», ասաց Խլղաթյանը՝ հավելելով, որ կառավարության որոշում է նախապատրաստվում Երեւանի ռիսկի նվազեցման նպատակով բազմաբնակարան շենքերի սեյսմազինվածության բարձրացման ուղղությամբ:

Հ. Հ.

**Հ.Գ.- Սեյսմամեկուսիչների, դրանց կիրառման, սեյսմազինվածության հայկական փորձի եւ մայրաքաղաքի սեյսմակայունության մասին առաջիկայում կներկայացնենք Սեյսմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ Միքայել Մելքումյանի տեսակետներն ու գնահատականները:**



## Մարտի 31-ին ակտիվիստները կապամոնտաժեն Մաշտոցի պուրակի տաղավարները

**Մաշտոցի պուրակում տաղավարների տեղադրման դեմ բողոքող բնապահպան ակտիվիստները նամակ են հղել ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին՝ տեղեկացնելով, որ 40-օրյա պայքարից հետո իրենք որոշել են մարտի 31-ին ժամը 1-ին ապամոնտաժել պուրակում կառուցված անօրինական տաղավարները:**



**Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը երեկ հանդես է եկել հայտարարությամբ՝ ակտիվիստներին կոչ անելով զերծ մնալ տաղավարների ապամոնտաժման գործողություններց, որը օրենսդրության պահանջներին ուղղակիորեն հակասող գործողություն է:**

**Պաշտպանը հավելել է, որ որ պուրակում տաղավարների տեղադրման իրավաչափության հարցը գտնվում է ՄԻՊ գրասենյակի ուսումնասիրման եւ քննարկման փուլում: Անդրեասյանը պատրաստակամություն է հայտնել շարունակել համագործակցությունը քաղաքացիական նախաձեռնության կազմակերպությունների հետ՝ խնդրի կարգավորման համար իրավական լուծումներ գտնելու նպատակով:**

**Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի որոշմամբ Աբովյան փողոցից ապամոնտաժված կրպակները մի քանի օր անց տեղադրվեցին Մաշտոցի պուրակում: Խնդրի առնչությամբ քաղաքապետարանը տարաբնույթ մեկնաբանություններ ու պատճառներ է ներկայացրել՝ հաճախ անհամոզիչ: Ընդդեմ այգու բետոնացման պայքարում են ոչ միայն քաղաքացիները, բնապահպան-ակտիվիստները, այլեւ բազմաթիվ մտավորականներ, արվեստագետներ, ովքեր կոչ են արել քաղաքապետարանին՝ ապամոնտաժել կրպակներն ու այգին բարեկարգել:**

**Հ. Հ.**

## Խ. Սուքիասյանին մերժեցին

**Թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը երեկ մերժեց գործարար Խաչատուր Սուքիասյանի դիմումը, որով նա խնդրում էր հաշվի չառնել ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության տեղեկանքը, ըստ որի ինքը 5 տարի անընդմեջ Հայաստանում չի բնակվել, եւ որպես պատգամավորության թեկնածուի գրանցել իրեն: Խաչատուր Սուքիասյանի՝ որպես պատգամավորի թեկնածուի գրանցումն այդպիսով մերժվեց, մինչդեռ թիվ 10 ԸԸՀ-ին դիմած մյուս թեկնածուների՝ Սարիբեկ Սուքիասյանի, Գարեգին Նուշիկյանի եւ Գագիկ Շահնազարյանի ներկայացրած փաստաթղթերը օրենքին համապատասխան ճանաչվեցին, եւ նրանք պատգամավորության թեկնածու գրանցվեցին: Խ. Սուքիասյանի շահերը ներկայացնող Արա Զոհրաբյանի խոսքով՝ Խ. Սուքիասյանն այս որոշումը պատրաստվում է բողոքարկել վարչական դատարանում, քանի որ նրա փաստաթղթերը հնարավորություն են տալիս որպես թեկնածու գրանցվելու. ոստիկանության տեղեկանքն առկա է, իսկ երկրորդ տեղեկանքը (անձնագրային եւ վիզաների վարչության), որը հիմք է ընդունում ԸԸՀ-ն, եւ որը նշում է Սուքիասյանի իբր 10 ամիս երկրից բացակայելու փաստը, առանց կնիքի է:** Ս. Խ.

## Լեռնային Ղարաբաղում ԵՃՇ ՊՀ-ն կշարունակի իր ծրագրերը

**Երեւանի ճարտարապետության ու շինարարության պետական համալսարանը 2008 թվականից Լեռնային Ղարաբաղում իրականացնում է կրթական, գիտամեթոդական ու այլ բնույթի ծրագրեր: Այս տարի նույնպես ծրագրերը շարունակական են լինելու:**

**2012 թվականից իրագործվում է Լեռնային Ղարաբաղում Սարսանգի պատվարի ուսումնասիրության ծրագիրը: Եվ աշխատանքների իրականացման նպատակով համալսարանի մասնագետների ներգրավվածությամբ ստեղծվել է 6 աշխատանքային խումբ:**

**Այս տարի Ճարտարապետության ու շինարարության համալսարանը նախատեսում է նաեւ մշակել Լեռնային Ղարաբաղի տարածքում գործող ջրամբարների շահագործման միջոցառումների ուսումնասիրությունը:** Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

## «Ես ծագումով ինձ հայ եմ համարում ու սիրում եմ հայերին»

Սասունցի Սերոբը թեեւ 3-րդ անգամ է Հայաստանում, բայց այստեղ արդեն շատ ծանոթներ ու ընկերներ ունի: Նրանց մեծ մասի հետ ծանոթացել է ոչ թե այստեղ, այլ Մուշում:

Սերոբի տունն ու ընտանիքը Մուշում են, հայրը համշենահայ է, մայրը՝ քուրդ:

Չնայած Սերոբը հայերեն չգիտի, բայց հայ ընկերների հետ լավ էլ կարողանում է շփվել, ինքը քրդերեն է խոսում, ընկերները՝ հայերեն, բայց զարմանալիորեն իրար հասկանում են (այնուամենայնիվ, մեր հարցազրույցը թարգմանվում էր) :



Անկախ այս ամենից՝ Սերոբն իրեն ծագումով հայ է համարում ու սիրում է հայերին: Ու երբ Սերոբին տեսնեք Երեւանի փողոցներով քայլելիս, չեք տարակուսի՝ նա իրեն զգում է ինչպես իր տանը:

Հայաստան վերջին անգամ եկել էր 8 տարի առաջ, ուրախությամբ ասում է՝ այստեղ շատ բան է փոխվել, բայց ինքն ավելի շատ ու կոնկրետ փոփոխություններ կուզենա տեսնել, երբ հաջորդ անգամ գա Հայաստան: Իսկ առայժմ սպասում է Արեւմտյան Հայաստանից եկող հայերին, որոնց հետ ապրիլի 24-ին բարձրանալու է Ծիծեռնակաբերդ, հետո նրանց հետ կվերադառնա Մուշ:

Սերոբի տվյալներով՝ Մուշում ներկայումս 20 հազար համշենահայեր են ապրում, սակայն չկա որեւէ կազմակերպություն, որը կմիավորի իրենց, ուստի համշենահայերն առիթից առիթ են հավաքվում:

Թե ի՞նչ գործով է նա զբաղվում Մուշում, պատասխանում է, որ աշխատանքը շաքարի ֆաբրիկայում է, զբաղվում է նաեւ այգեգործությամբ, շինարարությամբ, եւ որ իր համար առանձնակի կարեւոր է՝ հանդիպում է Մուշ գնացող հայերին, հյուրընկալում իր տանն ու քաղաքում ուղեկցում դեպի հայկական մշակույթի պահպանված վայրերը:

Սերոբը հայերին հյուրընկալում է սիրով ու անշահախնդրորեն, ասում է՝ կվիրավորվի, եթե դրա դիմաց իրեն փող առաջարկեն: Նրա հյուրընկալ վերաբերմունքը փաստում են եւ ընկերները, իսկ Մուշ ժամանող զբոսաշրջիկները Սերոբի մասին իմանում են մեկը մյուսից:

Հայաստանում Սերոբը դեռ շատ տեղեր գնալ չի հասցրել: «Չնայած շատ հրավերներ ունեմ», նշում է զրուցակիցս, որն, այնուամենայնիվ, հասցրել է տեսնել ամենամոտ ընկերներին եւ սփյուռքի նախարարությունում հայտնել իր պատրաստակամությունն իրազեկելու Մուշի հայ պատանիներին ու երիտասարդներին «Արի տուն» ծրագրի մասին եւ օգնելու, որպեսզի նրանք էլ գան Հայաստան:

Խոսելով Հայաստանից այս անգամ ստացած տպավորություններից, Սերոբը մի տեսակ խուսափում է բացասական կողմերը նշելուց. «Եթե վատն էլ տեսնեմ, չեմ նկատի, որովհետեւ իմ ծագումն էլ հայի է»: Բայց համեստորեն մի քանի ցանկություններ նշում է, օրինակ՝ կուզենար Հայաստանում տեղական արտադրանքն ավելի շատ լիներ, հատկապես սննդամթերքը, մարդիկ ավելի շատ զբաղվեին անասնապահությամբ, ավելի շատ լինեին առողջարանները, եւ թված կոնկրետ փոփոխությունների մեջ նաեւ ընդգրկում է՝ կուզենար, որ տուրիստական վայրերն ավելի հարմարվեն ու գրավիչ դառնային:

Սերոբի հետ զրույցը շարունակեցինք դեպի կանգառ քայլելով, որտեղից գնալու էր Հոկտեմբերյան, Մուշից ժամանած 2 քուրդ ընկերների հետ մինչ մեկնելն այնտեղ է ապրում: Ու երբ ճանապարհին մի երեխայի տեսանք հոր ձեռքը բռնած գնալիս, Սերոբը մի քիչ անհանգստացած ասաց. «Այստեղ երեխաները կարծես քիչ են»:

Արդեն կանգառում Սերոբը փոքր-ինչ պատմեց եւ իր ընտանիքից. 5 երեխա ունի, եւ կինը ծագումով քուրդ է: Իսկ ընտանիքում հավասարությունը Սերոբի համար ամենակարեւորն է. «Չնայած գեղեցիկ կանայք ամեն տեղ կան, բայց ես իմ խանումին երբեք չեմ դավաճանի»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

---

ՆԱՎԹԱՄԵՔԵՆԱՅԻՆ ՍԵՐ

## Թյուրքական աշխարհն՝ ամերիկյան դեսպանների յուրօրինակ «սե՞ր»

Ադրբեջանում մի կարճ ժամանակով Միացյալ Նահանգների դեսպանի պարտականություններն իրականացնելուց հետո դիվանագիտական գործունեությունն էլ ավարտելուն մոտ կանգնած, ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի ադրբեջանամետ կեցվածքն ու թյուրքական իրողությունների հանդեպ անտարբեր չլինելու հանգամանքը ապացույցների կարիք երբեք չեն ունեցել: Բրայզան այնքան հաճախ ու այնպիսի առատաձեռնությամբ էր թուրքամետ ու ադրբեջանամետ մտքեր արտահայտում, որ հակառակի մեջ նրան կասկածելու գերագույն ցանկությունն անգամ հիմնազուրկ էր մնում:

Պարզվում է, Միացյալ Նահանգների դեսպաններից միայն Բրայզան չէ, որ վերջին շրջանում իր թուրքամետ-ադրբեջանամետ դիրքորոշմամբ այդ երկրներում կցիռ (եւ ոչ միայն) ձեռք բերելու ջանքեր է գործադրում:

Ադրբեջանական լրատվամիջոցները «Ամերիկայի ձայն»-ին հղում անելով, ներկայացնում են, թե «Կասպյան ավազանի զարգացման հեռանկարները» թեմայով Վաշինգտոնյան Ռազմավարական միջազգային հետազոտությունների կենտրոնի մարտի 27-ի խորհրդաժողովում ելույթ է ունեցել Ադրբեջանում (2000-2003) եւ ապա նաեւ Թուրքիայում (2005-2008) ամերիկյան դեսպան Ռոսս Ուիլսոնը, որ այժմ ղեկավարում է ԱՄՆ ատլանտյան խորհրդի եվրասիական կենտրոնը: Ուիլսոնն, ըստ այդմ, հայտարարել է, թե ԱՄՆ քաղաքականությունը Կասպյան տարածաշրջանում «պարզ ու բաց է, քաղաքականության վեկտորն էլ ի սկզբանե ուղղված էր տարածաշրջանային երկրների տարածքային ամբողջականությանը եւ անկախությանն աջակցմանը»:

Թե որքա՞ն ու ինչպե՞ս են Ադրբեջանն ու Թուրքիան կարեւորվում ամերիկյան քաղաքականության համար, հասկանալի է Միացյալ Նահանգների որոշելիք խնդիրն է, սակայն ակնհայտ է, որ նախկին դեսպանը թերեւս փորձել է թարմացնել հիշողությունը, եթե հաշվի առնենք, թե ընդհանրապես ինչպես են ամերիկյան դեսպանները «աշխատում» Թուրքիայում եւ Ադրբեջանում:

Առավել հետաքրքրական է, որ ամերիկացի դիվանագետը նախ Միացյալ Նահանգների դիրքորոշում է փորձել ներկայացնել՝ չլինելով ներկայիս վարչակազմի ուղղակի ներկայացուցիչ, ինչպես նաեւ իր ելույթում փորձել է գնահատել տարածաշրջանի զարգացման հեռանկարները՝ շեշտելով սահմանների փակ լինելու հանգամանքը: Բնականաբար, Ուիլսոնը մոռացել է հիշատակել այդ փակության հիմնական պատճառները կամ առայժմ էլ պահպանվելու «հիմքերը», չմոռանալով, սակայն, տարածաշրջանային առաջնակարգ դիրքերում ներկայացնել ոչ միայն Թուրքիան, այլեւ Ադրբեջանը:

Այս պարագայում հետաքրքրական է, թե ինչու «ամերիկյան տեսակետներ» ներկայացնող դիվանագետը չի նշել մարդու իրավունքների, ազգային փոքրամասնությունների, կրոնական ազատությունների այն բոլոր ոտնահարումների ու խախտումների մասին, որոնք խոսքի ազատության սահմանափակումների հետ «ձեռք ձեռքի» պահպանվում են ինչպես թուրքական, այնպես էլ ադրբեջանական ներկայիս իշխանությունների երկարակյացությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

---

## Աղվան Հովսեփյանը բավարարել է սփյուռքահայ գործարարի ներկայացուցչի բողոքը

«**Ազգը**» շարունակաբար անդրադառնում է Հայաստանում սփյուռքահայերի շահերի ոտնահարմանը, դատական նիստերին, նաեւ ամիսներ ու տարիներ ձգձգվող անհիմն քաշքշուկներին: Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանում քննվեց ամերիկահայ գործարար Էդմոնդ Խուդյանի բողոքը: Խուդյանի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը դատարան ներկայացրած բողոքում պահանջեց վերականգնել Էդ. Խուդյանի խախտված իրավունքները եւ օրինական շահերը: ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության քննչական վարչության քննիչ Տիգրան Հարությունյանի վարույթում է գտնվում «Արին Կապիտալ» ներդրումային ՍՊԸ տնօրեն Էդուարդ Եսայանի կողմից կանխամտածված նյութերով սնանկության հատկանիշներ ստեղծելու փաստի առթիվ դեռ անցյալ տարվա մայիսին հարուցված քրեական գործը: Անցած տարի ԱՄՆ քաղաքացի Էդմոնդ Խուդյանը դիմել է ՊԵԿ հարկային ծառայության քննիչ Տիգրան Հարությունյանին՝ խնդրելով իրեն տուժող ճանաչել, քանի որ վերը նշված ընկերության տնօրենը կեղծել է վեց փոխառության պայմանագրերում եւ հանձնմանընդունման ակտերում Էդ. Խուդյանի ստորագրությունները, որոնցով էլ ստացվել է, որ ընկերության 61.1 տոկոս բաժնեմաս ունեցող Խուդյանը պարտք է 2.081.000 ԱՄՆ դոլար: Խուդյանի ստորագրությունները կեղծված լինելու փաստը հաստատելու կամ հերքելու համար վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր Էդ. Խուդյանից որպես նմուշ վերցնել ստորագրություն եւ նշանակել ձեռագրաբանական փորձաքննություն: Դատական նիստի ընթացքում Խուդյանի ներկայացուցիչը դատարանին հայտնեց, որ վարույթն իրականացնող մարմինը ավելի քան 10 ամիս է Էդ. Խուդյանից որպես նմուշ չի վերցրել որեւէ ստորագրություն, չի հարցաքննել ո՛չ Էդուարդ Եսայանին եւ ո՛չ էլ Էդ. Խուդյանին: Կրկին անհիմն քաշքշուկ քննիչ Տիգրան Հարությունյանի կողմից եւ պարտականությունների անգործություն: Իսկ թե ի՞նչ նպատակ է դա հետապնդում՝ «**Ազգի**» հարցին Խուդյանի ներկայացուցիչն ասաց, որ այս պահին դատարանում մեկ այլ գործով Խուդյանին պարտավորեցնում են վերադարձնել կեղծ ստորագրություններով կուտակված 2 միլիոն դոլար գումարը:

Այս ձգձգվող քաշքշուկի միակ լուսավոր կետն այն է, որ նախորդ օրը ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը բավարարել է ՊԵԿ-ի քննչի կողմից դրսեւորվող անգործության վերաբերյալ սփյուռքահայ գործարարի ներկայացուցչի բողոքը եւ ցուցում տվել քննիչ Տիգրան Հարությունյանին՝ քննչական գործողություններ իրականացնել:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

---

## Մի տարում՝ հայրենիքի 24 դավաճան

**Այսպիսի արդյունքի է հասել Ադրբեջանի ԱԱ նախարարությունը 2011 թվականին: Իսկ այդ մասին հայտարարել է գերատեսչության ղեկավար Էլմար Մահմուդովը: Ընդ որում, Իլհամ Ալիեւի գլխավոր խունզարկուն այդ մասին խոսել է անթաքույց հպարտությամբ՝ հանդես գալով Ադրբեջանի հատուկ ծառայությունների հիմնադրման 93-րդ տարեդարձի հանդիսավոր միջոցառմանը:**

**Այսինքն, սա միայն հրապարակայնացված փաստ է՝ հարեւան երկրում անցյալ տարի հատուկ ծառայությունները կարողացել են հայտնաբերել եւ վնասազերծել հայրենիքի 24 դավաճանի: Դրանք Ադրբեջանի քաղաքացիներ են, որ համագործակցել են օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ: Էլմար Մահմուդովը չի բացահայտել, թե որ երկրների օգտին են Ադրբեջանին դավաճանել նրա 24 քաղաքացիները: Ըստ երեւույթին, դա հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն է:**

**Դա, սակայն, այլ թեմա է: Տվյալ դեպքում աչքի է զարնում, որ Ադրբեջանի քաղաքացիների շրջանում օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցությունը բավական տարածված երեւույթ է: Մի տարում բացահայտվածների թիվն ինքնին ինչ-որ բան ասում է:**

**Սովորաբար որեւէ երկրի քաղաքացի արտասահմանյան հատուկ ծառայությունների գործակալ է դառնում կամ քաղաքական համոզմունքներով, կամ՝ ի շահ դրամի: Ինչն էլ որ ադրբեջանցիներին դրդած լինի համագործակցել օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ, փաստը վկայում է, որ Իլհամ Ալիեւի իշխանությունը հասարակական աջակցություն չունի եւ չի լուծում քաղաքացիների օրախնդիր հարցերը:**

**Բայց եթե նույնիսկ մի թռուցիկ հայացք ձգենք Ադրբեջանի ԱԱ նախարարի հրապարակած նաեւ այլ փաստերի վրա, ապա թերեւս պարզ կդառնա, թե որքան է այդ երկիրը խճճվել իշխանությունների հյուսած որոգայթներում: Այսպես, միայն 2011թ. Ադրբեջանում բացահայտվել է անդրազգային հանցավոր խումբ, առգրավվել է 630 կիլոգրամ թմրանյութ, 137 մարդ ենթարկվել է քրեական պատասխանատվության:**

**Սա դեռ պաշտոնական տեղեկատվությունն է:**

---

## Ադրբեջանի քաղաքացիների արկածները Դաղստանում

**Դաղստանի հանրապետությունում Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայության վարչությունը 52 օպերատիվ-պրոֆիլակտիկ միջոցառում է անցկացրել: Կազմվել է 329 վարչական արձանագրություն, 658 հազար ռուբլու տուգանք է սահմանվել: «ՌԻԱ-Դաղստան»-ի հաղորդմամբ, Ռուսաստանի Դաշնության միգրացիոն օրենսդրության խախտման դեպքեր արձանագրվել են հատկապես Ադրբեջանի քաղաքացիների կողմից: Մախաչկալայի Լենինյան շրջանի դատարանի որոշմամբ Ադրբեջանի 8 քաղաքացու նկատմամբ կայացվել է արտաքսման վճիռ:**

**Տեղեկատվությունը կարծես շարքային է. ոչ մի երկրի քաղաքացի օտարության մեջ, մանավանդ եթե բնակվում է օրենքի խախտմամբ, նման տհաճություններից ապահովագրված չէ: Խնդիրն այն է, որ Բաքվի իշխող վարչախումբը երկրի իրավիճակը ներկայացնում է այնպես, կարծես Ադրբեջանը «տասնյակհազարավոր օտարերկրացիների համար Ավետյաց երկիր է»:**

**Նույն օրը, երբ ռուսաստանյան լրատվամիջոցները տարածել են Դաղստանից Ադրբեջանի քաղաքացիների արտաքսման մասին լուրը, Բաքվում հրապարակվել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի բաժնի վարիչ Ալի Հասանովի հոդվածը: Այն ոչ ավել, ոչ պակաս քարոզում է, որ «Ադրբեջանը նոր աշխարհաքաղաքական իրողություններում ունի վճռական դերակատարություն»: Իսկ տնտեսական զարգացման նախարար Շահին Մուստաֆաեւը, որ, ի դեպ, տնտեսագետի որակավորում ստացել է Երեւանում, խոսում է «Հարավային Կովկասի տնտեսության մեջ Ադրբեջանի 70 տոկոս մասնաբաժնի» մասին:**

**Ո՞րն է իրականությունը, «տնտեսական հրաշքների երկիր» Ադրբեջա՞նը, թե՞ այդ երկրի միլիոնավոր քաղաքացիները, որ մի կտոր հաց են վաստակում Ռուսաստանում, Թուրքիայում, այլ երկրներում եւ երբեմն էլ ենթարկվում արտաքսման: Ճշմարտությունն, անշուշտ, երկրորդն է: Եվ թերեւս այդ պատճառով է, որ, չնայած Թուրքիայի եւ Իրանի միակողմանի ջանքերին, Իլհամ Ալիեւն այդպես էլ այդ երկրների հետ անցագրային ռեժիմը վերացնելու որոշում չի ընդունում:**

**Չէ՞ որ այդ դեպքում «ծաղկուն» Ադրբեջանից արտագաղթողների թիվն անհամեմատ կմեծանա, եւ «նորին բռնապետական մեծությունը» մի օր իր նստավայրում կմնա մենակ:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Հարցազրույց

# Բյուրականյան «ընտրակրքեր»

***Բյուրականի աստղադիտարանի տնօրենի ընտրություններից հետո կրքերը ոչ մի կերպ չեն հանդարտվում: Փոթորիկն անցնելու միտում չունի՞ արդյոք: Աստղադիտարանի առաջատար գիտաշխատող Արեգ Միքայելյանի կարծիքը.***

**- Պարոն Միքայելյան, մի հարցազրույցում Դուք արտահայտել եք հետեւյալ միտքը. «Զարմանալի եւ անբացատրելի իրողություն է, բայց մեզ մոտ՝ Բյուրականում, երբեք նորմալ ընտրություններ չեն լինում... Հիշենք 1988 թվականին Համբարձումյանի հրաժարականից հետո տեղի ունեցած բոլոր ընտրությունները, երբ իրարանցում է սկսվում, թեկնածուներից եւ ոչ մեկը չի հավաքում ձայների անհրաժեշտ քանակ, ընտրությունները ձգձգվում են, ի վերջո նշանակվում է տնօրենի պաշտոնակատար եւ այլն: Նույնիսկ գիտական խորհրդի կազմ ընտրելիս մեր կոլեկտիվը բոլորին «ջնջում» է, եւ, օրինակ, ընտրվում է միայն 3 հոգի, կամ եղել է նույնիսկ՝ 1»: Այնուամենայնիվ, կփորձե՞ք որեւէ բացատրություն գտնել այդ անբացատրելի իրողության վերաբերյալ:**

- Պատճառն այն է, որ «դեմ» քվեարկողները միշտ ավելի շատ են եղել, քան՝ «կողմ»: Ընտրությունների սկզբունքն էլ այնպիսին է, որ կարելի է ոչ մեկին չընտրել: Ինքս մի քանի անգամ առաջարկել եմ, որ ոչ թե ջնջեն, այլ ավելի շատ ձայներ տան, եւ ամեն ինչ որոշվի ձայների առավելությամբ, ոչ թե միայն մեկն անցնի կամ ոչ ոք չանցնի: Չէի ցանկանա նորից կրքերը բորբոքել, բայց կա մեկ հարց, որի մասին արժե խոսել. արդյո՞ք տնօրենը կամ տնօրենությունը պարտավոր են ամեն ինչ անել գիտաշխատողների համար, իսկ նրանք միայն օգտվեն հարմարավետ պայմաններից: Արդյո՞ք միայն պահանջատիրական մոտեցում պետք է լինի: Այո, ֆինանսները շատ սուղ են, եւ կարծես տնօրենությունն է պատասխանատու դրա համար: Սակայն տնօրենությունը միայն բաշխում է դրանք եւ պատասխանատու է դրանց օպտիմալ օգտագործման համար: Ոչ մի տնօրեն էլ չի կարող փոխել բյուջետային ֆինանսավորման չափը: Տարիներ շարունակ հետեւում եմ մեր կոլեկտիվի անդամների վարվելակերպին եւ զարմանում, որ նրանց ճնշող մեծամասնությանը չի հետաքրքրում աստղադիտարանի բարօրությունը կամ ընդհանուր շահերը: Եթե նրանք ոչինչ չեն անում աստղադիտարանի համար, ապա ի՞նչ բարոյական իրավունք ունեն որեւէ բան պահանջելու: Այնինչ կա նաեւ տնօրենությանը օգնելու կամ խանգարելու հարցը: Եվ ընդհանրապես, իրավունքները պետք է փոխկապակցված լինեն պարտականությունների հետ: Եթե սպասենք, որ մեկ անձ բոլորիս պետք է ֆինանսներով, համակարգիչներով, գործուղումներով եւ այլնով ապահովի, ապա արդյունավետությունը շատ ցածր կլինի:

**- Ակադեմիական գիտական ինստիտուտների նորմալ գործունեության հիմքում պիտի լինի գիտական խորհրդի արդյունավետ գործունեությունը: Արդյո՞ք նմանատիպ գործունեության բացակայությունը հետհամբարձումյանական ողջ շրջանում չի վկայում աստղադիտարանի վքարային վիճակի մասին. վքար, որը տրամաբանորեն պահանջում է «վիրաբուժական» միջամտություն՝ անգամ ավտորիտար մեթոդներով:**

- Ըստ կանոնադրության, գիտական խորհուրդը տնօրենի խորհրդակցական մարմինն է, եւ տնօրենը դրա նախագահն է: Սա արդեն սահմանափակում է դնում խորհրդի աշխատանքի վրա, ինչը գուցե եւ որոշ սխալ է: Սակայն նորմալ աշխատանքային մթնոլորտում այդպես չէր լինի: Ուրեմն, պատճառները ավելի խորն են: Ավտորիտար մեթոդները կարելի է հասկանալ՝ վերեւից (Ակադեմիայի կողմից) վերահսկող մարմին ստեղծելու ձեւով, ինչը հենց տեղի ունեցավ վերջին ընտրություններից հետո (ստեղծվել է երեք ակադեմիկոսներից բաղկացած խորհուրդ): Գիտխորհրդի աշխատանքի պասիվությունը բացատրվում է թե՛ տնօրենության լիբերալությամբ եւ թե՛ գիտխորհրդի եւ ընդհանրապես աստղադիտարանի կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի իներտությամբ: Գիտխորհրդի եւ ոչ մի անդամ ըստ էության չի աշխատում. նրանց աշխատանքը միայն հանգում է գիտխորհրդի նիստերին մասնակցությանը: Կայացված որոշումների մեծ մասը մնում է թղթի վրա: Որպես կանոն, չեն նշանակվում որոշումներն իրականացնող պատասխանատու անձինք եւ ժամկետներ: Ժամանակին, երբ աստղադիտարանի գիտքարտուղարն էի, առաջարկեցի ստեղծել հանձնաժողովներ, որոնք կաշխատեն առանձին ուղղություններով՝ գիտական, տեխնիկական, կանոնադրական, կադրային, միջազգային եւ այլն: Նորից զարմանալիորեն, այն հավանության չարժանացավ: Այնպես որ, գիտխորհուրդը կարող է լուրջ դեր խաղալ, սակայն ո՛չ այսպիսի գիտխորհուրդը եւ ո՛չ այս պայմաններում:

**- Բավական է զրուցել Բյուրականի կոլեկտիվի որեւէ անդամի հետ, միանգամից հնչում են բողոքներ ու դժգոհություններ, եւ դրանցում, ամենաբարձր նոտայի վրա, որ կոլեկտիվի աշխատանքի լուրջ արդյունքներն ամբողջովին վերագրվում են անդամներից ինչ-որ մեկին՝ չհիշատակելով անգամ մյուսների անունները: Արդյո՞ք դա վիրուսներից մեկը չէ, որ գործում է Բյուրականի «հիվանդության» հիմքում:**

Իհարկե, յուրաքանչյուր մարդ պետք է ստանա ըստ արժանվույն: Մեզ մոտ այդպիսի երկու խնդիր է եղել. մեկը՝ կապված Համբարձումյանի, մյուսը՝ գիտական մյուս ղեկավարների հետ: Հասկանալի է, որ աստղադիտարանի հաջողությունների մեծ մասը կապվում է Համբարձումյանի անվան հետ: Սակայն դրանում իրոք ճշմարտություն կա. մեր գրեթե բոլոր աստղագետները «սնվել» եւ աճել են նրա գաղափարներով: Նա հիմնադրել է տիեզերածնության բյուրականյան դպրոցը, առաջադրել մի շարք գաղափարներ, որոնք դարձել են մեր մյուս մեծ աստղագետների հետագա աշխատանքների թեմաներ, գիտական ղեկավար է հանդիսացել հաջորդ սերնդի գրեթե բոլոր եւ եւս 2 սերունդների բազմաթիվ աստղագետների համար: Իհարկե, ունեցել ենք նաեւ Մարգարյան, Գուրզադյան, Առաքելյան եւ այլք, որոնք նույնպես համաշխարհային մեծություններ են: Սակայն իմ խորին համոզմամբ, նրանցից եւ ոչ մեկը չէր հասնի այն հաջողություններին, որոնց հասել է Համբարձումյանի աջակցությամբ: Ինչ վերաբերում է գիտական այլ ղեկավարներին, ապա այո, իրոք շատ դեպքերում նրանց է վերագրվում արդյունքների զգալի մասը՝ առանց նրանց էական մասնակցության: Օրինակ, ունեցել ենք բաժինների, խմբերի կամ թեմաների ղեկավարներ, ովքեր կանոնավոր կերպով հեղինակակից են գրվել բոլոր այն հոդվածներում, որոնք պատրաստվել են իրենց ղեկավարած միավորման աշխատակիցների կողմից: Սա հոդվածների քանակ ապահովելու մի յուրատեսակ, բայց հիվանդագին մեթոդ է:

**- Ինչպե՞ս եք մեկնաբանում Հայկ Հարությունյանի դոկտորական ատենախոսության վերաբերյալ մամուլում հրապարակված կարծիքը՝ Արա Սեդրակյանի, Վահագն Գուրզադյանի, Սերգեյ Մատինյանի:**

- Ավելի շատ՝ բացասական: Հարգելով նշված գիտնականների մասնագիտական բարձր մակարդակը, այնուամենայնիվ չեմ խրախուսում գիտական քննարկումները հասարակական մակարդակ հանելու նրանց միտումը: Մի բան է գիտական քննարկումը, որի համար կան գիտական եւ մասնագիտական խորհուրդներ, գրախոսների եւ ընդդիմախոսների ինստիտուտներ, այլ բան է հասարակական պարսավանքը կամ հասարակական «քննարկումը» ոչ մասնագետների առջեւ: Ի՞նչ պետք է դրանից հասկանա սովորական ընթերցողը, բացի այն, որ գիտնականներն իրար «կոկորդ են կրծում»: Ասեմ նաեւ, որ այդ հրապարակումը հայտնվեց աստղադիտարանի տնօրենի ընտրություններից անմիջապես առաջ, ինչը նույնպես միտումնավորության կասկածներ է հարուցում: Ի վերջո, Հայկ Հարությունյանի աշխատանքները վերաբերում են այսպես կոչված «այլընտրանքային տիեզերաբանությանը», որն իրոք տիեզերաբանների մեծամասնության կողմից չի ընդունվում: Բայց ո՞վ ասաց, որ գիտության մեջ միայն ընդունված ճշմարտությունների վերաբերյալ են հետազոտություններ կատարվում: Մեր ամենամեծ գիտնական Վիկտոր Համբարձումյանի աշխատանքների զգալի մասը ներկայացնում է այլընտրանքային տեսությունների զարգացում՝ թե՛ աստղառաջացման, թե՛ գալակտիկաների էվոլյուցիայի եւ թե՛ գերխիտ նյութի գաղափարի ներմուծման հետ կապված:

Նման հրապարակումները կարող են նաեւ լուրջ հարված հասցնել մեր գիտության հեղինակությանը: Դրանց փոխարեն, կառաջարկեի, որ գիտնականներն ավելի ակտիվ լինեն իրենց աշխատանքները հանրամատչելի կերպով ներկայացնելու հարցում, որպեսզի հասարակությունը ծանոթանա մեր գիտնականների արդյունքներին, վերջապես հասկանա եւ ընդունի գիտության կարեւորությունը: Չմոռանանք, որ հասարակության եւ պետության կողմից գիտության նկատմամբ վերաբերմունքը եւ վերջին հաշվով նաեւ ֆինանսավորումը հենց դրանով է պայմանավորված:

**ՄԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ**

# «Տերմիտների» վտանգավոր առաքելությունը Հայաստանում

*1-ին էջից*

Նման քայքայիչ առաքելությունների հաջորդ թիրախը աղանդավորական խմբավորումների կողմից քրիստոնեություն ուսուցանելն է աշխարհի առաջին քրիստոնյա երկրի բնակչությանը: Այդ խմբավորումները ոչ միայն մահաբեր գրականությամբ են զինված, այլեւ կանխիկ գումարներով եւ մարտավարական ունակություններով, եւ երկրի ընկճված ժողովուրդը հեշտ թիրախ է միսիոներական այդ խմբավորումների առաջնորդների համար:

Հայաստանը երկու քարի արանքում է հայտնված: Մի շարք եվրոպական պայմանագրերի անդամ դառնալով ստիպված է խոսքի եւ կրոնի ազատություն շնորհել եւ այդ պատճառով էլ պաշտոնապես գրանցել է մի շարք կրոնական աղանդավորական խմբակցությունների՝ բավարարելու եվրոպացի դիտորդների պահանջները, բայց, մյուս կողմից, այդ ազատությունն աղանդավորական կազմակերպությունները օգտագործում են քայքայիչ գործունեություն ծավալելու եւ բռնվելու դեպքում էլ կեղծ տագնապ են առաջացնելու:

Խոսքը, անշուշտ, կայացած հարանվանությունների մասին չէ, որոնք իրենց հավատարմությունը հայկական ինքնության հանդեպ ցուցադրել են արդեն վաղուց: Հայ կաթոլիկ եւ հայ ավետարանական եկեղեցիները, այլընտրանքային դավանություններ լինելով հանդերձ, նշանակալիորեն նպաստել են ինչպես հայրենիքի, այնպես էլ Սփյուռքի մշակութային եւ դաստիարակչական աշխատանքներին: Այսօր էլ Հայաստանը մեծապես օգտվում է նրանց բարեգործական առաքելություններից: Հակառակ դրան՝ որոշ մարդիկ հակված են այդ հարանվանությունները եւս դասելու Եհովայի վկաների կամ այլ մոլեռանդ խմբավորումների շարքին:

Մյուս կողմից, օտար աղանդավորական խմբավորումները Հայաստանում են առաջին հերթին նսեմացնելու դերը Հայաստանյայց առաքելական եկեղեցու, որն առանց այդ էլ շատ ուրիշ մարտահրավերների պետք է դիմագրավի. հոգեւորականների պակաս, համաժողովրդական անտարբերություն՝ հավատի նկատմամբ, եւ որ պակաս կարեւոր չէ՝ եկեղեցու նվիրապետության ներքին տարաձայնություններ:

Հայաստան մուտք գործած աղանդները շատ լավ են զինված՝ փողով եւ արտասահմանում ուսանելու խոստումներով: Նրանք օգտագործում են ուղեղների կառավարման մարտավարությունը՝ քայքայելու համար ընտանիքները ու դրանցով՝ հասարակության հիմնական կառույցները:

Հայաստանը պարտավորվել է գործել համաձայն եվրոպական չափորոշիչների, եւ Աստված չանի, եթե Եհովայի վկաներից մեկն ու մեկը անարգվի կամ որեւէ միաբանություն պառակտվի կամ քայքայվի: «Ֆրիդըմ Հաուսը» եւ պետքարտուղարությունն անմիջապես Հայաստանը դասում են «ոչ ազատ» կամ «նվազ ազատ» երկրների շարքում՝ հենվելով այդ կազմակերպություններից ստացած ահազանգող տեղեկագրերի վրա:

Վրաստանում, սակայն, ոչ մի կրոնական կազմակերպություն, բացի վրացական եկեղեցուց, իրավական կարգավիճակ չունի: Նույնիսկ հայկական եկեղեցին, որ դարեր շարունակ գոյություն է ունեցել վրացական երկրում, երկար ժամանակ պայքարում է նման կարգավիճակ ձեռք բերելու համար:

Իրավիճակը նույնն է Ադրբեջանում: Մահմեդական կրոնից բացի որեւէ այլ կրոնական խմբավորում ենթարկվում է հետապնդման եւ նույնիսկ կոտորածի: Եվ Արեւմուտքը ոչ մի ձեւով չի արձագանքում դրան:

Հայաստանում աղանդավորական կազմակերպությունների ամենավտանգավոր արտահայտությունը զգացվում է հայոց բանակի շարքերում: Մի երկիր, որը դեռեւս գտնվում է չհայտարարված պատերազմի վիճակում, կարիք ունի իր սահմաններում ապրող յուրաքանչյուր ամրակազմ տղամարդու մասնակցությանը հայրենիքի պաշտպանության գործում: Եհովայի վկաները, մինչդեռ, կրոնական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվելու պատրվակով մերժում են զենք կրել, «մոռանալով», որ իրենց առաջնորդներից ոմանք կրոնական արարողությունն են կատարում կրելով իրենց մարմինների վրա թաքնված զենքեր:

Նման իրավիճակներից խուսափելու եւ միաժամանակ եվրոպացի «աչալուրջ հսկիչներին» բավարարելու միտումով հայ խորհրդարանականները 2004 թվին ընդունեցին այլընտրանքային ծառայության օրենքը՝ թույլ տալով զինծառայությունից հրաժարվողներին կատարել այլ աշխատանքներ ծերանոցներում, հիվանդանոցներում եւ որբանոցներում: Բայց սա էլ, իր հերթին, զերծ չէ այն ռիսկից, որ տվյալ հիմնարկներում ապաստան գտած մեր հայրենակիցները հեշտ թիրախ կդառնան այդ աղանդավորական անձնավորությունների ձեռքում:

Կա նաեւ մեկ այլ հանգամանք: Ըստ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների, հակառակ նման այլընտրանքային օրենքի գոյության, ոչ մի եհովայական չի օգտվել դրանից: Նրանք բոլորը նախընտրել են դատարան կանչվել, որտեղ դասալքությունը 4 տարի ազատազրկմամբ է պատժվում: Դատարանները, սակայն, ավելի մեղմ պատիժներ են սահմանել՝ 2 տարի ազատազրկում՝ տանելի պայմաններում:

Շատերն են օգտվում այս հանգամանքից եւ Եհովայի վկա դառնում, որովհետեւ երկու տարի բանտ նստելուց հետո նրանք կարողանում են օտար երկրներ ճանապարհորդել եւ որպես հալածված փոքրամասնության ներկայացուցիչներ ապաստան խնդրել այնտեղ:

Մեր որոշ զորանոցների վիճակը, դժբախտաբար, նպաստում է որոշ երիտասարդների որոշմանը, որ խուսափեն ծառայելուց այն բանակում, որը պատվով հաղթանակեց ղարաբաղյան պատերազմում եւ այժմ էլ արիաբար պաշտպանում է մեր սահմանները ազերի հնարավոր ներխուժումից:

Տերմիտների համանմանությունը, կարծում ենք, չափազանց տեղին է եւ պահանջում է մշտապես զգոն լինել՝ կարողանալ դիմադրելու համար ամեն հարձակում:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

# Ասադը Հոմսում հայտնվել է գնդակոծության տակ



Սիրիայի նախագահ Բաշար Ասադը եւ նրան ուղեկցող անձինք Հոմս քաղաք կատարած այցելության ժամանակ հայտնվել են հրաձգային զենքի կրակի տակ, հաղորդում է իսրայելական «Հաարեց» թերթը:

Միջադեպը իրարանցում է առաջացրել Ասադի թիկնապահների խմբում, որոնց պահանջով քաղաքում նախագահական այցն ավարտվել է նախատեսված ժամկետից շուտ: Կառավարական զորքը ապստամբներից Հոմսը հետ էր գրավել մարտի սկզբներին: Մինչեւ վերջերս քաղաքում «զտումներ» էին իրականացվում:

Սիրիայի պետական հեռուստատեսությունը ցուցադրել է Հոմսի կիսավեր փողոցներում նախագահ Ասադի կատարած կարճատեւ զբոսանքը, որի ընթացքում նրան մոտեցել են մարդկանց խմբեր: Նախագահը նրանց խոստացել է, որ շուտով քաղաքում կյանքը կվերադառնա բնականոն հուն եւ նույնիսկ «առաջվանից լավ» կլինի:

Սակայն գնդակոծության պատճառով Ասադը եւ նրան ուղեկցող անձինք ստիպված են եղել հապճեպորեն վերադառնալ Դամասկոս:

Չնայած իշխանությունների այն հավաստիացումներին, թե Հոմսը լիովին անցել է իրենց վերահսկողության տակ, քաղաքում փաստորեն դեռ մնում են ընդդիմադիրներ: Նրանցից մեկը հեռախոսով Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, թե իրականում կառավարությունը չի կարողանում վերահսկել Հոմսը:

Կառավարական զորքը Հոմսը գրոհել էր 26 օր, ականակոծելով ու հրետակոծելով ապստամբների դիրքերը: Մարտերի ընթացքում սպանվել էին հարյուրավոր մարդիկ:

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՍԻՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻՑ

# Սրբապղծությունից անդին

Ադրբեջանցի «գյուտարարներին» կարելի է միայն խղճալ: Մոլուցքի մեջ ի՞նչ ասես հորինում են: Մեկն էլ խնդիր է դրել «պարզել, թե հայերն ինչ գրական, թատերական արժեքներ են յուրացրել»: Որպես «յուրացված արժեք» հիշվում է Ուզեիր Հաջիբեկովի «Արշին մալ ալան» օպերետը:

Այդ զավեշտախաղը գրվել է 1913թ., երբ Հաջիբեկովն ուսանում էր Պետերբուրգի երաժշտանոցում: Նույն տարվա հոկտեմբերի 25-ին տեղի է ունեցել առաջնախաղը: Բեմադրող ռեժիսորը Հուսեյն Արաբլինսկին էր: Գլխավոր դերերում հանդես են եկել Սարաբսկին, Աղդամսկին, Օլենսկայան, Հուսեյնովը, Հուսեյնզադեն, Գյուլսաբահ խանումը: Ընդ որում, որոշ կանացի դերեր կատարել են տղամարդ դերասաններ, քանի որ այն տարիներին Բաքվում ադրբեջանցի դերասանուհիներ դժվար էր գտնել:

Թերեւս այս հանգամանքն էլ հեղինակին դրդել է համաձայնություն տալու, որ օպերետը թարգմանվի այլ լեզուներով: Նման պայմանավորվածություն կայացել է Հաջիբեկովի եւ Սեդրակ Մաղալյանի միջեւ: Վերջինս «Արշին մալ ալան»-ը թարգմանել է հայերեն եւ բեմադրել Թիֆլիսում:

Սա է «մշակութային յուրացման» ողջ պատմությունը: Այս դեպքում, սակայն, շատ դժվար է ասել, թե ով է ավելի շատ շահել՝ Մաղալյա՞նը, թե՞ Հաջիբեկովը: Այսպես ենք ասում, քանի որ «Արշին մալ ալան»-ը բեմադրելու համար հեղինակն, ինչպես վերեւում նկատեցինք, հանդիպում էր մեծ դժվարությունների: Մուսուլման հասարակությունը տրամադիր չէր տեսնելու, թե ինչպես են ծաղրվում կրոնական եւ ազգային սովորույթները: Գումարած, որ կանացի դերերը ստիպված տղամարդիկ էին կատարում:

Այդ իրավիճակում օպերետի հայերեն կամ վրացերեն բեմադրությունը Հաջիբեկովի համար ոչ միայն մխիթարանք, այլեւ եկամուտի աղբյուր էր: Իր հեղինակային իրավունքը նա վաճառում էր հասույթի 10 տոկոսն ունենալու պայմանով:

Իսկ թե որքան «զարգացած» եւ «թատրասեր» էր այն տարիներին «ադրբեջանական» հասարակությունը, վկայում է փաստը. «Արշին մալ ալան»-ի բեմադրիչ Հուսեյն Արաբլինսկին 1919թ. զարմիկի կողմից սպանվել է բեմում կանացի դերեր խաղալու համար: Ահա թե ինչու սրբապղծությունից անդին է, երբ այսօր ինչ-որ մեկը փորձում է ներշնչել, թե 1870-ական թվականներից Կովկասում մի քանի պրոֆեսիոնալ թատրախմբեր ունեցած հայ ժողովուրդը կարիք ուներ «յուրացնելու» Ուզեիր Հաջիբեկովի հեղինակած պարզունակ օպերետը:

Վ. Ա.

# Թուրքիայում Հիտլերի «մասնակցությամբ» գովազդի ցուցադրումը դադարեցվեց

Թուրքական Marka գովազդային գործակալությունը դադարեցրել է Biomen շամպունի գովազդային տեսահոլովակի ցուցադրումը: Ադոլֆ Հիտլերի «մասնակցությամբ» սարքված տեսահոլովակը Թուրքիայի հրեական համայնքի վրդովմունքն էր հարուցել, հաղորդում է BBC-ն:

Գովազդային գործակալությունը այդ տեսահոլովակը նաեւ հանել է իր կայքէջից: Marka-ի աշխատակիցները «Հյուրիեթ» թերթի թղթակցին հայտարարել են, թե իրենց գովազդի գաղափարը մարդիկ իբր սխալ են հասկացել: «Եթե այս գովազդում Ադոլֆ Հիտլերի փոխարեն ելույթ ունենար Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը, մարդիկ կմտածեին, թե մենք նրան ծաղրում ենք, իսկ երբ Հիտլերն է, նրանք ասում են, թե մենք նրան գովազդում ենք», թերթին ասել է գործակալության սեփականատեր Հուլուսի Դերիջին:

Ավելի վաղ Turk Musevi Cemaati հրեական կազմակերպությունը եւ երկրի գլխավոր ռաբբին դատապարտել էին գովազդը եւ պահանջել էին դադարեցնել դրա ցուցադրումը: Նրանք նշել էին, որ առեւտրային նպատակներով Հիտլերի պատկերի օգտագործումը անթույլատրելի է, եւ Marka-ից պահանջել էին հրապարակավ ներողություն խնդրել:




Հիտլերի «մասնակցությամբ» նկարահանված եւ 12 վայրկյան տեւողությամբ տեսահոլովակը անցյալ շաբաթվանից ցուցադրվում էր երկրի մարզական ալիքներից մեկով: Տեսահոլովակում օգտագործված են Հիտլերի ելույթների արխիվային դրվագներ: Տեսահոլովակում դիկտատորը պարզաբանում է, որ եթե տղամարդիկ կանացի հագուստ չեն կրում, ուրեմն չպետք է օգտագործեն նաեւ կանացի շամպուն: Ուստի Հիտլերը «իսկական տղամարդկանց» առաջարկում է օգտվել Bioman շամպունից:

# Նոր սահմանադրություն Մալիում

Մալիում զինվորական հեղաշրջմամբ մարտի 22-ին իշխանության գլուխ անցած խունտան (վարչախումբը) երեկ հրապարակել է նոր սահմանադրություն, որը պետք է փոխարինի նախկին՝ ժամանակավոր սահմանադրությանը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Մալիի բնակիչները նոր սահմանադրության ընդունման մասին իմացել են պետական հեռուստատեսությամբ բանակի ներկայացուցչի ունեցած ելույթից:

Խունտայի հայտարարության համաձայն, նոր հիմնական օրենքն ուղղված է ժողովրդավարության պահպանմանը եւ երաշխավորում է մարդու բոլոր հիմնական իրավունքները:

Նաեւ հայտարարվել է, որ խունտայի անդամները չեն մասնակցելու արտահերթ խորհրդարանական ընտրություններին, որոնց անցկացման ժամկետը դեռ հայտնի չէ:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Արեւմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական ընկերակցության ղեկավարները մարտի 27-ին կասեցրել են իրենց կազմակերպությունում Մալիի անդամակցությունը: Ղեկավարների հանդիպումից հետո հրապարակված որոշման մեջ խունտային կոչ է արվում անհապաղ հրաժարվել ապօրինաբար զավթած իշխանությունից:

# Կկառուցվի Կանադա-ԱՄՆ երկու նավթամուղ

Կանադայի եւ ԱՄՆ-ի երկու խոշոր էներգետիկ ընկերություններ իրարից անկախ որոշել են կառուցել Կանադայից ԱՄՆ մտնող երկու նավթամուղ, որոնց ընդհանուր տարողունակությունը կկազմի օրական 850 հազար բարել: «Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը հաղորդում է, որ նախագծերն ավարտվելու են մոտավորապես 2014-ի կեսերին:

Երկու նոր նավթամուղները կդառնան Keystone XL նավթամուղի մրցակիցը, որը ներկայումս առկախ վիճակում է ԱՄՆ Կոնգրեսի վետոյի պատճառով:

Երկու նավթամուղները Կանադայի նոր հանքավայրերի նավթը կհասցնեն Մեքսիկական ծոցի ափին գտնվող նավթամշակման գործարաններ: Ենթադրվում է, որ նախագծերը հեշտությամբ կստանան քաղաքական աջակցություն, քանի որ նավթամուղների անդրսահմանային հատվածներն արդեն կառուցված են:

Keystone նախագիծը Կոնգրեսում ձախողվեց ԱՄՆ վարչակազմի եւ բնապահպան կազմակերպությունների հակազդեցության պատճառով: Իր հերթին հանրապետական ընդդիմությունը Սպիտակ տանը մեղադրում է ԱՄՆ-ում բենզինի թանկացման համար: Ներկայումս դրա 1 լիտրի գինը 1 դոլար է, որն ամենաբարձր գինն է վերջին 2 ամսում:

Ամերիկացի բնապահպանները դժգոհ են նոր նավթամուղների կառուցումից, որոնցով տեղափոխվելու է Կանադայի բիտումային ավազների նավթը: Սպասվում է, որ Կանադայում մինչեւ 2020 թ. նման նավթի արդյունահանումը կհասնի օրական 3 մլն բարելի. դա ներկայիս մակարդակի գրեթե կրկնապատիկն է: Կանադայի նավթահանույթի ընդհանուր ցուցանիշը կաճի մեկուկես անգամ, հասնելով օրական 4,2 մլն բարելի:

Պ. Ք.

# «Վախի հավասարություն». ինչը կփրկի Իսրայելին միջուկային պատերազմից

«Ճակատագրի քմահաճույքը: 1990-ին՝ Պարսից ծոցում առաջին պատերազմի նախաշեմին, Իսրայելի պաշտպանության բանակի գլխավոր շտաբը որոշում ընդունեց փակել ռազմածովային ուժերի համար սուզանավի ստեղծման նախագիծը: Այդ որոշումը առաջ էր տանում գլխավոր շտաբի այժմ արդեն նախկին պետի տեղակալ Էհուդ Բարաքը: Մոտ օրերս հենց Բարաքը՝ Իսրայելի պաշտպանության նախարարը, Գերմանիայի հետ կստորագրի պայմանագիր իսրայելական ՌԾՈւ-ին 6-րդ սուզանավը տրամադրելու մասին:

Սակայն Գերմանիայի կառավարությունը, խղճի խայթ զգալով, որ պատերազմի վերջում Պարսից ծոցում տեղեկություն էր տարածվել, որ մի շարք գերմանական ընկերություններ Իրաքին օգնություն էին ցուցաբերում քիմիական զենք ստանալու գործում, համաձայնեց Իսրայելին փոխանցել երկու սուզանավ այն նույն մոդելից, որի ստեղծումն արգելեց Ցահալի (այսպես են կոչում հրեաներն իրենց բանակը) գլխավոր շտաբի պետը: Եվ այդ ժամանակից ի վեր նշված սուզանավերին գումարվեցին եւս երեքը: Հիմա Իսրայելը ստանում է վեցերորդը:

«Դոլֆին» (գերմ.՝ Dolphin) դասի 6 սուզանավ՝ սա է Իսրայելի պատասխանը Թեհրանի միջուկային ծրագրին: Սակայն անիմաստ չէ՞ իրանական օբյեկտների կարճաժամկետ ազդեցություն ունեցող գրոհը: Լավագույն դեպքում նման հարձակումը հետ կմղի միջուկային ծրագրի զարգացումը մի քանի ամսով, բայց չի ստիպի իրանցիներին հրաժարվել ատոմային ռումբ ստանալու ձգտումից:

Իսրայելի ղեկավարները որպես ռազմավարական ծրագրի մշակման ելակետ պիտի ընդունեն այն, որ, վերջին հաշվով, Իրանը կունենա միջուկային զենք: Այդ դեպքում իրանական թշնամական վարչակարգի կողմից նման զենքի կիրառումը թույլ չտալու միակ միջոցը՝ այսպես կոչված «վախի հավասարության»՝ պարիտետի ստեղծումն է, որը նման կլինի այն վիճակին, որ ստեղծվել էր ԱՄՆ-ի եւ Խորհրդային Միության միջեւ «սառը պատերազմի» տարիներին:

Միայն այն դեպքում, եթե Թեհրանի ղեկավարությանը պարզ դառնա, որ Իսրայելի դեմ միջուկային զենքի օգտագործման փորձը կունենա հակահարված՝ իրանական քաղաքների վրա ուղղված միջուկային մարտագլխիկով հրթիռների տեսքով, նա մտածել նույնիսկ չի համարձակվի իրադարձությունների նման զարգացման մասին:

Իրանում ոչ ոք շահագրգռված չէ նման չափերի ազգային աղետի մեջ միայն այն բանի համար, որ զոհվեն սիոնական կազմավորման մի քանի հարյուր հազար բնակիչներ: Ի տարբերություն նրա, ինչ փորձում են ներշնչել իսրայելցիներին պետության որոշ ղեկավարներ, իրանցի առաջնորդները ռացիոնալ մարդիկ են եւ հակված չեն ազգային ինքնասպանության:

Եվ այդ պատճառով կարելի է հասկանալ «Դոլֆին» դասի սուզանավերի կարեւորությունը: Ահաբեկման հուսալի համակարգ ստեղծելու համար բավական չեն պաշտոնական Երուսաղեմի ռազմատենչ հայտարարությունները Իրանի ղեկավարության հասցեին եւ ակնարկները, թե, համաձայն օտարերկրյա աղբյուրների, Իսրայելն ունի միջուկային ներուժ:

Մենք պատրաստ ենք ցուցադրել հակահարված հասցնելու մեր ունակությունը: Այլ կերպ ասած, իրանցիները պիտի հասկանան, որ եթե նույնիսկ նրանց հաջողվի անսպասելի հարված հասցնել հրեական պետությանը, Իսրայելը ունակ է կործանարար պատասխան տալու:

Օտարերկրյա աղբյուրները հաղորդում են, որ իսրայելական ՌԾՈւ-ի «Դոլֆին» սուզանավերը հրոք համալրված են մարտական գլխիկներ կրող թեւավոր հրթիռներով, որոնց գործողության շառավիղը կազմում է 1500 կիլոմետր:

Բոլոր սուզանավերի վրա տեղադրված են սարքավորումներ, որոնք գործարկում են իսրայելական արտադրության «Պոպայ» մարտավարական հակահրթիռները, որոնք կարող են նշանակետին հասցնել մեծ հզորության միջուկային մարտագլխիկ: Կասկած չկա, որ 6 սուզանավով սպառազինված իսրայելական ՌԾՈւ-ն (3-ն արդեն Իսրայելում են, 4-րդը կստանա հաջորդ տարում, 5-րդը՝ 2014 թվականին, իսկ 6-րդը՝ մի քանի տարի հետո), Իսրայելի հակառակորդը կընդունի որպես ծանրակշիռ փաստարկ»:

**Ռեուվեն Պեդացուր, «Կուրսոր», Իսրայել:**
**Թարգմանությունը՝ Զ. ՄԵԼԻՔՅԱՆԻ**

# «Արտավազդ» մրցանակ՝ թատերարվեստի նվիրյալներին

**«Ազգը»** իր ընթերցողներին տեղեկացրել էր մարտի 27-ին՝ Թատրոնի միջազգային օրվան նվիրված ձեռնարկի մասին: Այդ տոնական օրը, հայ թատերարվեստի նվիրյալները իրար շնորհավորելով անցան Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի մուտքի կարմիր գորգի վրայով ու մտան դահլիճ: Քիչ անց հնչեցին կոչնակները եւ ազդարարվեց ՀԹԳՄ «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխության մեկնարկը, որն այս տարի նվիրված էր նաեւ Հայաստանի թատերական գործիչների միության 70-ամյակին: Հայ թատրոնի անխոնջ նվիրյալների մասնագիտական տոնը անց էր կացվում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո: Ներկա էին եւ շնորհավորական ուղերձներ էին բերել ԱԺ նախկին նախագահ **Հովիկ Աբրահամյանը**, մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**, քաղաքապետ **Տարոն Մարգարյանը**, պատգամավորներ, հյուրեր: ՀԹԳՄ նախագահ **Հակոբ Ղազանչյանը** շնորհավորելով ներկաներին, բարձր գնահատանքի խոսքեր հղեց թատերարվեստում բեղուն գործունեություն ծավալած ՀՀ ժող. արտիստ Տիգրան Լեւոնյանի հասցեին, որի ծննդյան 75-ամյակը լրացավ այս տարի: Հայ բեմարվեստի ականավոր արվեստագետի հիշատակը հավերժացնելու համար սահմանվել էր հատուկ մրցանակ, որը հանձնվեց Հ. Ղափլանյանի անվ. դրամ. թատրոնի դերասան **Արթուր Ութմազյանին**՝ տարվա լավագույն ձեռքբերման համար: Մրցանակակիրը շնորհակալական խոսքում ասաց. «Ցավոք, մենք շատ հաճախ կորցնելուց հետո ենք հասկանում մեր մեծությունների արժեքը: Եկեք այնպես անենք, որ մեր մեծերը դառնացած չգնան մեզանից»: Հայ թատերարվեստին արժանապատիվ ծառայելու համար «Արտավազդ» մրցանակների արժանացան ՀՀ ժող. արտիստ **Գուժ Մանուկյանը** (Դրամ. թատրոն), **Հենզել Հայրապետյանը** (Սունդուկյանի թատրոնի բեմի վարիչ), **Ժենյա Ներսիսյանը** եւ ՀԲԸՄիության Բեյրութի (Լիբանան) Վահրամ Փափազյան թատերախմբի վարչության երկարամյա ատենապետ **Տրդատ Ավետիքյանը**: Վերջինս շնորհակալություն հայտնեց եւ ասաց, որ մրցանակը էլ ավելի պարտավորեցնող է: Պրոֆեսոր **Երվանդ Ղազանչյանը** մրցանակակիրներին առանձնահատուկ շնորհավորեց եւ Հովիկ Աբրահամյանին խնդրեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին փոխանցել արվեստագետների առաջարկ-խնդրանքը՝ Երեւանում հայ ազգի սոխակ Գոհար Գասպարյանի արձանը կանգնեցնել: Առաջարկը ընդունվեց հոտնկայս երկարատեւ ծափերով եւ հուսանք, որ այն կիրականանա:



Ներկաները անհամբերությամբ սպասում էին, թե երբ է հայտարարվելու 12 անվանակարգերում մրցանակի արժանացածների անունները: Վերջապես բացվեց առաջին ծրարը եւ հայտնի դարձավ, որ լավագույն երիտասարդ դերասանուհի է ճանաչվել Տաթեւ Ղազարյանը («Բլեզ» համազգային թատրոն), լավագույն երիտասարդ դերասան՝ Մանվել Խաչատրյանը («Մոլագարը», Ստանիսլավսկու ռուս. թատ.) եւ Նիկոլայ Ավետիսյանը («Ձուկն առանց ջրի կամ Suicide», Ղափլանյանի անվ. թատ.): Լավագույն երիտասարդ բեմադրիչ ճանաչվեց Սամսոն Մովսեսյանը («Քիք», ՀԹԳՄ-ի բեմ), լավագույն երիտասարդական ներկայացում՝ «Բրեմենյան երաժիշտները» (բեմ. Հակոբ Ղազանչյան, ՊՀԹ): Լավագույն սցենոգրաֆիա՝ Ալինա Ալեքսանյան («Թեւավորը», Թումանյանի տիկն. թատ.), Գարեգին Եվանգուլյան («Եվ երկինքն երեք պտուղ ինկավ», Գյումրիի Աճեմյանի թատ.): Լավագույն պիես անվանակարգին արժանացավ Գուրգեն Խանջյանի «Անմեղունակների պարը», լավագույն ներկայացում՝ Սերգեյ Դովլատովի «Աբանամաս» (Ստանիսլավսկու ռուս. թատ., բեմադրիչ Ալեք. Գրիգորյան) եւ Մանյեի «Բլեզ» (Համազգային թատ., բեմ. Հրաչյա Գասպարյան): Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար մրցանակը հանձնվեց Գոհար Իգիթյանին (Դրամ. թատ.), իսկ տղամարդ դերակատար՝ Արամ Մխիթարյանին (Հ. Աբելյանի անվ. թատ., Վանաձոր): Լավագույն կին դերակատար՝ Նարինե Աելխանյան (Կոմեդիայի թատրոն) եւ Կարինե Ջանջուղազյան (Համազգային թատրոն), իսկ տղամարդ դերակատար մրցանակին արժանացավ Արմեն Մարգարյանը (Սունդուկյանի թատ.): Տարվա լավագույն ռեժիսուրա «Արտավազդ» մրցանակի արժանացավ Արմեն Խանդիկյանը Լ. Մութաֆյանի «Ձուկն առանց ջրի կամ Suicide» ներկայացման համար (Հ. Ղափլանյանի դրամ. թատրոն): Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը ոսկե մեդալներ հանձնեց թատերարվեստին ծառայելու եւ ծննդյան 70, 60-ամյակների առիթով՝ Արմեն Մարությանին, Արտաշես Շահվերդյանին, Կարեն Աբրահամյանին: Տոնական օրը մինչեւ ուշ գիշեր շարունակվեց «Հարսնաքար» ռեստորանում՝ դերասանների եւ հայ երգիչների ելույթներով:

Ավարտվեց մրցանակաբաշխությունը եւ այն հաստատեց, որ հայ թատրոնը շարունակող սերունդ ունի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

# Ին՞չպես առաքել արժեքավոր գրքերը

Լոնդոնում անգլերենով լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս **Հրաչիկ Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ.)»** գիրքը՝ օսմանյան կայսրության կողմից 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին Կիլիկիայում իրականացրած հայերի բարբարոսական ջարդերին վերաբերող: (Ուսումնասիրությունը հայերենով տպագրվել է 2009թ., Երեւանի պետական համալսարանի հրատարակչությամբ, Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության մեկենասությամբ): Ներկա հրատարակության անգլերեն թարգմանությունը կատարել է **Մելիսա Բրաունը**, ԵՊՀ հրատարակչության հայագիտական ծրագրերի շրջանակներում: Մեր զրույցի ժամանակ հրատարակչության տնօրեն **Պերճ Ստեփանյանը** տեղեկացրեց, որ նախատեսված է գրքի 500 տպաքանակի մի զգալի մասը բաշխել հայագիտական ամբիոններ ունեցող աշխարհի բոլոր համալսարաններին (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա, Եգիպտոս եւ այլ): Ինչպես պրն Ստեփանյանն է նկատում. «Նյութը փայլուն ուսումնասիրված, ճշգրիտ փաստերի հիման վրա, մասնագիտական վերլուծություններով ուղեկցվող պատմագիտական արժեք ունեցող հրատարակություն է»:

Գրքի հրատարակության եւ տպագրության, նաեւ առաքման ծախսերը հոգացել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը, հավելյալ՝ Լոնդոնում կատարված լեզվաոճական լրացուցիչ խմբագրման ծախսերը նույնպես: Արտերկրից գրքերի խմբաքանակի առաքումը սովորաբար ֆինանսապես ծախսատար է եվրոպական երկրների համեմատությամբ, իսկ Լոնդոնից առաքումը շատ ավելի թանկ է: Տպաքանակից 50 գիրք ուղարկվել է Փարիզ, շուտով եւս 50-ը կլինի Ֆրանսիայի մայրաքաղաքում, որտեղից առաքման խնդիրը համեմատաբար դյուրին է: Հայ պատմագիտության այս արժեքավոր գրքի առաքումը, արտերկրի գիտական-մտավորական շրջանակներում դրա տարածումը ազգային քաղաքականության շահերից է բխում: Գրքի խմբաքանակի առաքման խնդիրները լուծելու համար ակնկալվում է Մեծ Բրիտանիայում եւ Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատների միջամտությունը: Սակայն մեզ հայտնի դարձավ, որ դեսպանատների հնարավորությունները շատ ավելի սուղ են: Նման պարագայում ազգային փոխադրողի կարգավիճակ ունեցող «Արմավիա» ընկերությունը կառավարության հետ փոխադարձ համաձայնությամբ անհրաժեշտ է, որ կատարի ինչպես այս, նաեւ կարեւոր այլ գրքերի տեղափոխությունները: Եվ առհասարակ, այս հարցը կարգավորել է պետք սփյուռքահայ գաղթօջախներից Հայաստան, հարկ եղած դեպքում նաեւ՝ հակառակ ուղղությամբ:

Ս. Բ.

# Նոր հրատարակություններ

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել Գեւորգ աբեղա Սարոյանի (ներկայիս՝ Գեւորգ եպիսկոպոս) «Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի եկեղեցագիտական գործունեությունը (1892-1910) եւ լիբերալ-բողոքական դպրոցի հետ ունեցած առնչությունները» եւ Վալերի Գ. Թունյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցի - «Պաշտպան Հայրենյաց»» գրքերը:

Գեւորգ աբեղա Սարոյանն իր աշխատանքում փորձել է վեր հանել եւ համակողմանի վերլուծության ենթարկել 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարի առաջին տասնամյակների Հայ եկեղեցում ծավալված աստվածաբանական զարգացումները, այդ թվում բարենորոգչական շարժման խնդիրները, առաջին անգամ խորքային վերլուծության ենթարկելով Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի հոգեւոր գործունեությունը, աստվածաբանական եւ եկեղեցագիտական ըմբռնումները:

Վալերի Թունյանը ռուսալեզու իր մենագրության մեջ ներկայացնում է 19-րդ դարի Հայ եկեղեցու նշանավոր հայրապետ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի գործունեությունը Ռուսական կայսրության 19-րդ դարի առաջին կեսի քաղաքականության հետ փոխադարձ կապի մեջ:

Երկու աշխատությունները հրատարակվել են Մայր աթոռի բարերար **Գաբրիել Չեմբերճյանի** մեկենասությամբ:

# Հանդիսություն՝ նվիրված Լոնդոնի Թեքեյան մշակութային միության վերածննդին

Մարտի 17-ին Լոնդոնի «Քոթոն Թաուր» հյուրանոցում կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն՝ Լոնդոնի Թեքեյան մշակութային միության վերակազմավորման եւ նոր վարչության, նախագահի եւ ատենապետի ընտրության առթիվ: Տոնական հանդիսությանը ներկա էին ավելի քան հարյուր հյուրեր՝ Լոնդոնի հայ համայնքից, ինչպես նաեւ թեքեյանցիներ Փարիզից, Ժնեւից, Բեյրութից, Հայաստանից, Կիպրոսից, ԱՄՆ-ից եւ աշխարհի այլ վայրերից: Բոլորն էլ այստեղ էին՝ կիսելու համընդհանուր ուրախությունը եւ հարգանքի տուրք մատուցելու այն ազգանվեր հայորդիներին, որոնց ջանքերի շնորհիվ 1947թ. Բեյրութում հիմնադրվեց Թեքեյան մշակութային միությունը, իսկ 1975թ.՝ Լոնդոնի Թեքեյան մշակութային միությունը:

Հանդիսավոր երեկոն բացվեց Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ **Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի** օրհնությամբ, որից հետո ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ԼԹՄՄ ստեղծման եւ կայացման գործում մեծ ավանդ ունեցող հանգուցյալ նվիրյալների հիշատակը:

Տ. Վահան եպիսկոպոսը, բարձր գնահատելով միության վաստակը ազգային եւ եկեղեցական կյանքում, շնորհավորեց բոլոր թեքեյանցիներին լոնդոնյան վարչության վերածննդի կապակցությամբ եւ հղեց իր արտաբուխ բարեմաղթանքները:

Հանդիսության պաշտոնական մասը շարունակեց Լոնդոնի ԹՄՄ նորընտիր ատենապետ պրն **Հրաչ Գույումջյանը**: Իր ելույթում պրն Գույումջյանը շնորհավորեց ԼԹՄՄ-ին եւ շնորհակալություն հայտնեց իրեն վստահված առաքելության համար՝ հավաստիացած լինելով նոր վարչության հաջողություններին: Ատենապետն անդրադարձավ նաեւ անցյալում կատարված աշխատանքներին եւ երախտիքի խոսք հայտնեց բոլոր այն անձանց, որոնք տասնամյակներ շարունակ հավատարիմ են մնացել ԹՄՄ առաքելությանը:

Ընդունելությանը ներկա էր նաեւ Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան տիկ. **Կարինե Ղազինյանը**, որն իր շնորհավորական խոսքում ընդգծեց ԹՄՄ բեղուն գործունեությունն ու նվիրումը հայ ժողովրդին: Դեսպանը բարձր գնահատեց նաեւ միության ավանդը հայ-բրիտանական կապերի եւ բրիտանահայ գաղութի էլ ավելի զարգացման գործընթացում եւ պատմական որոշ փաստարկներ ներկայացրեց:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ Լոնդոնի Թեքեյան մշակութային միության նորընտիր նախագահ, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի (Հայաստան) նախագահ եւ Լոնդոնի Թեքեյան խնամակալ մարմնի (Tekeyan Trust - London) քարտուղար պրն **Վարդան Ուզունյանը**: Իր ելույթում պրն Ուզունյանը մանրամասնեց ԹՄՄ եւ ԼԹԽՄ ստեղծման գաղափարը եւ կայացման ուղին, որը լի էր բազում դժվարություններով, եւ նույնիսկ վերջին տարիներին տարբեր առարկայական պատճառներով նրանց գործունեությունը դադարել էր: Պրն Ոզունյանը ներկայացրեց երկու կառույցների իրականացրած մշակութային ձեռնարկները՝ ԼԹՄՄ «Էրեբունի» երկշաբաթաթերթը, որը գործեց ավելի քան 15 տարի, Հայաստանից նկարիչների ցուցահանդեսների, երգի եւ պարային համույթների, թատերախմբերի հյուրախաղերի եւ այլ մշակութային միջոցառումների կազմակերպում, ինչը կապող օղակ էր Սփյուռքի եւ Հայրենիքի միջեւ: Պրն Ուզունյանը խոսեց նաեւ Հայաստանի Թեքեյան մշակութային միության եւ նրա նշանակության մասին, վերջում անդրադարձավ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի գործունեությանը:

Երեկոն շարունակեցին «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձու պրն **Նար Խաչատուրյանը** (Լիբանան), Լոնդոնի Թեքեյան խնամակալ մարմնի նախագահ եւ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձու տիկ. **Սիլվա Գրիգորյանը**, ԱՄՆ/Կանադայի կենտրոնական վարչության անդամ եւ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձու պրն **Բաբկեն Մկրյանը**, որոնք շնորհավորեցին ԼԹՄՄ նորընտիր վարչությանը եւ հաջողություններ մաղթեցին իրենց աշխատանքներում:

Միակ ներկայացուցիչը Հայաստանից՝ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն պրն **Արմեն Ծուլիկյանը**, Հայաստանի բոլոր թեքեյանական կառույցների անունից շնորհավորեց ԼԹՄՄ վերածննդի առթիվ, բարեմաղթանքներ եւ պատրաստակամություն հայտնեց՝ համագործակցելու եւ հնարավորինս աջակցելու: Իսկ թե ինչո՞ւ էր ԼԹՄՄ գործունեությունը պասիվ 1990-ականներին, պրն Ծուլիկյանը բացատրեց այն փաստով, որ ողջ ջանքերն ուղղված էին մի նպատակի իրականացմանը՝ մայր հայրենիքում մշակութային օջախ ստեղծելուն, ինչի շնորհիվ այսօր Երեւանի սրտում վեր է խոյանում Թեքեյան կենտրոնը:

Ընդունելության պաշտոնական մասն ավարտվեց պրն Գույումջյանը, ներկայացնելով նորընտիր վարչության բոլոր անդամներին, ինչպես նաեւ լոնդոնահայ համայնքի երիտասարդ ակտիվիստներին, որոնք պատրաստ են շարունակել ձեւավորված ԹՄՄ ավանդույթներն ու գաղափարները:

Հանդիսավոր ձեռնարկի տոնական տրամադրությունն ապահովում էին **Սիփան Հակոբյանի** ելույթները (հնչեցին հայ եւ օտար դասական երգեր): Երեկոյի ընթացքում նաեւ կարճ տեսաֆիլմով եւ տեսաշարով ներկաները ծանոթացան Հայաստանի «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող մշակութային, կրթական, մարզական եւ սոցիալական ծրագրերին:

ՍԵԴԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Վլադիմիր Հակոբյանը հետապնդում է առաջատարին

Մեկօրյա հանգստից հետո շախմատի Եվրոպայի առաջնության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը՝ անցկացնելով 7-րդ տուրի հանդիպումները:



Առաջատարների խմբում գտնվող Վլադիմիր Հակոբյանը սեւերով հաղթեց գրոսմայստեր Կայդո Կուլաոտսին ու վաստակեց 5,5 միավոր: Նա այդ արդյունքով 2-13-րդ տեղերն է բաժանում՝ ընդամենը կես միավոր զիջելով բելառուսցի գրոսմայստեր Սերգեյ Ազարովին: Վերջինս 7-րդ տուրում պարտության մատնեց Արկադի Նայդիչին:

Տուրն անհաջող էր առաջատարների խմբում գտնվող մեր մյուս շախմատիստի՝ Սերգեյ Մովսիսյանի համար, որը պարտվեց Անդրեյ Իստրատեսկուին: Մովսիսյանը 4,5 միավորով նահանջեց 50-րդ հորիզոնական: Նա առաջին պարտությունը կրեց: Հակոբյանից հետո 2-րդ լավագույն արդյունքն ունի Գաբրիել Սարգսյանը, որը 5 միավորով 35-րդ տեղում է: Գաբրիելը սեւերով հաղթեց Դավորին Կուլջաշեւիչին: Հակոբյանն ու Սարգսյանը դեռեւս չեն պարտվել:

Հայ շախմատիստներից 3-րդ անպարտելին Հովհաննես Գաբուզյանն է: Նա հաղթեց սերբ Բրանկո Դամլյանովիչին ու վաստակած 4,5 միավորով ընթանում է 47-րդ հորիզոնականում: Նույնպիսի արդյունք ունի նաեւ Հրանտ Մելքումյանը, որն առաջին պարտությունը կրեց մոլդովացի Վիկտոր Բոլոգանի հետ պարտիայում:

7-րդ տուրում հաղթեց նաեւ Արման Փաշիկյանը, որի մրցակիցն ավստրիացի Գեորգ Ֆրոեմիսն էր: Արմանը 3,5 միավորով 197-րդ տեղում է: Առաջին պարտությունը կրեց Տիգրան Պետրոսյանը՝ զիջելով ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանին: Տիգրանը 4 միավորով 121-րդ տեղում է: 3,5-ական միավոր ունեն Զավեն Անդրեասյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, որոնք պարտվեցին համապատասխանաբար ադրբեջանցի Վուգար Հաշիմովին եւ ուկրաինացի Ալեքսանդր Արեշչենկոյին: 2,5 միավոր ունեցող Վլադիմիր Պողոսյանը հաշտություն կնքեց Վեսելին Պանտեւի հետ:

# «Ապոելի» հիասքանչ հեքիաթն ավարտվեց

**Կայացան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչի առաջին երկու հանդիպումները: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Նիկոսիայում կայանալիք «Ապոել»-«Ռեալ» հանդիպումը: Կիպրոսի չեմպիոնն ընթացիկ մրցաշարի հայտնությունն է ու մի շարք անակնկալներ էր մատուցել: Շատերին էր հետաքրքրում, թե կկարողանա՞ թիմն այս անգամ էլ անակնկալ մատուցել «Ռեալին»: Սակայն յուրաքանչյուր պատմություն իր ավարտն ունի եւ կիպրոսյան հեքիաթն էլ այս խաղով ավարտվեց: Դաշտի տերերին չհաջողվեց լրջորեն դիմադրել «Ռեալին»: Ճիշտ է, բավական ժամանակ իսպանական ակումբին չէր հաջողվում գտնել մրցակցի դարպասի բանալին: Սակայն ի վերջո «Ռեալը» 3-0 խոշոր հաշվով հաղթանակ տոնեց: 2 անգամ աչքի ընկավ Բենզեման, մեկ գնդակ էլ խփեց Կական: «Ռեալը» գործնականում լուծեց կիսաեզրափակիչ դուրս գալու խնդիրը:**



**Խաղից հետո թիմերի մարզիչների կարծիքը հետեւյալն էր:**

**Իվան Յովանովիչ** («Ապոել»)- **Արդյունքն օրինաչափ է: Փորձեցինք դիմակայել մրցակցին, բայց խաղավերջում «Ռեալը» իր գրոհների տեմպն արագացրեց ու հասավ ցանկալի արդյունքի: Մեզ համար մեծ պատիվ էր նման թիմի դեմ խաղալը: Մենք ականատես եղանք «Ռեալի» բարձրակարգ խաղին: Այս խաղը կարելի է համարել մեզ համար պարզապես ֆանտաստիկ մրցաշրջանի գագաթնակետը: Իմ սաները կարող են հպարտանալ այն ամենով, ինչ ցուցադրեցին այս մրցաշարում: «Ռեալն» արդեն կիսաեզրափակչում է, դրանում կասկած չունեմ: Կարծում եմ, որ թիմը կմտնի եզրափակիչ ու հույս ունեմ՝ կհաղթի: Չեմպիոնների լիգայի մրցաշարում մեր գլխավոր նպատակը խմբային մրցաշարի արգելքը հաղթահարելն էր, ինչն արդեն մեզ համար ֆանտաստիկ արդյունք էր: Մեր ելույթը ոսկե տառերով կգրվի ոչ միայն ակումբի, այլեւ կիպրոսյան ֆուտբոլի տարեգրությունում:**

**Ժոզե Մոուրինյո** («Ռեալ»)-**Մեզանից շատ ջանքեր պահանջվեցին հաշիվը բացելու համար, քանի որ մրցակիցը գրագետ էր օգտագործում իր ուժեղ կողմերը: Թեեւ «Ապոելում» չկան վառ անհատականություններ, սակայն խաղի կազմակերպման առումով հիանալի թիմ է: «Ապոելի» նկատմամբ հաղթանակ կարելի էր տոնել միայն լավ խաղի շնորհիվ, ինչը մեզ ի վերջո հաջողվեց: Այսօր մենք «Ապոելին» մեծ հարգանքով վերաբերվեցինք: Նույնը լինելու է նաեւ «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում կայանալիք պատասխան խաղում: «Ապոելը» չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկության գլխավոր հայտնությունն է:**

**Լիսաբոնում կայացած խաղում եւս հաջողությունն ուղեկցեց հյուրերին՝ «Չելսիի» ֆուտբոլիստներին: Հանդիպման ելքը վճռեց 75-րդ րոպեին «Բենֆիկայի» դարպասը Կալուի խփած միակ գնդակը:**

**Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:**

**Ժորժ Ժեզուշ** («Բենֆիկա»)- **Խաղն անցավ հետաքրքրական պայքարում: «Չելսին» եվրոգավաթների մրցաշարերի զգալի փորձ ունեցող թիմ է: Մենք գրեթե ողջ խաղի ընթացքում տիրում էինք նախաձեռնությանը, սակայն հաջողությունը երես էր թեքել: Չեմ կարծում, թե արժանի էինք պարտության: Առջեւում պատասխան հանդիպումն է: Զգում եմ, որ կարող ենք գոլ խփել Լոնդոնում:**

**Ռոբերտո դի Մատեո** («Չելսի»)- **Սա անհավանական է, մենք նույնիսկ երազել չէինք կարող նման արդյունքի մասին: Հիանալի է, որ դարպասն անառիկ պահեցինք: Պաշտպանությունում առանձնակի խնդիրներ չունեցանք: Մրցակիցը վաղուց սեփական հարկի տակ չէր պարտվել: Դա եւս ապացուցում է, թե որքան լավ խաղացինք այսօր:**

# Սլավիկ Հայրապետյանն ավարտեց ելույթները

Նիցցայում անցկացվող գեղասահքի աշխարհի մեծահասակների առաջնությունում Հայաստանի միակ պատվիրակ Սլավիկ Հայրապետյանին չհաջողվեց մտնել եզրափակիչ փուլ: Որակավորման մրցումներում նա 92,84 միավորով զբաղեցրեց 18-րդ տեղը ու դուրս մնաց հետագա պայքարից: Եզրափակիչ մտան 12 ուժեղագույն գեղասահորդներ, որոնց կմիանան նաեւ բարձր վարկանիշ ունեցող 18 մարզիկներ:

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

# Առջեւում Հայաստան-Ադրբեջան մրցախաղն է

Դորտմունդում ընթացող սեղանի թենիսի աշխարհի թիմային առաջնությունում հայ թենիսիստները հերթական հանդիպումներն անցկացրին: Տղամարդկանց հավաքականը նախ 2-3 հաշվով զիջեց Նոր Զելանդիայի ընտրանուն, ապա 3-1 հաշվով հաղթեց Եմենի թենիսիստներին:

Նորզելանդացիների հետ մրցախաղում 1-ին միավորը թիմին պարգեւեց Մուրադ Ասատրյանը՝ 3-2 հաշվով հաղթելով Ջոն Կորդուեին: 2-րդ խաղում էլ Մեսրոպ Ղուկասյանը 3-0 հաշվով ջախջախեց Ռոջեր Ռաոյին: Ցավոք Ալեքսանդր Դիարյանին չհաջողվեց հաղթական վերջակետ դնել այդ հանդիպմանը՝ պարտվելով Քեյին Վուին (1-3): Մրցախաղը շարունակվեց եւ հաջորդ 2 խաղերում էլ Մեսրոպ Ղուկասյանն ու Մուրադ Ասատրյանը պարտվեցին ու տանուլ տվեցին հանդիպումը:

Եմենի հետ խաղում Մուրադ Ասատրյանը 3-0 հաշվով ջախջախեց Մուներ Ալ Դուբանիին, Մեսրոպ Ղուկասյանն էլ հաղթեց Մոհամեդ Ալ Հաշեդին (3-2): 3-րդ խաղում մրցակիցներից Աբդուլռահման Ալ Քերշին պարտության մատնեց Ալեքսանդր Դիարյանին (3-0): 3-րդ՝ վճռորոշ միավորը մեր թիմին պարգեւեց Մեսրոպ Ղուկասյանը՝ հաղթելով Մուներ Ալ Դուբանիին:

4-րդ խմբի N ենթախմբում Հայաստանի հավաքականը 6 միավորով 3-րդ տեղում է: Վերջին խաղում հայ թենիսիստները մրցելու են ադրբեջանցիների հետ, որոնք 5 միավորով 5-րդ տեղում են: Նրանք 2-3 հաշվով զիջել են Նոր Զելանդիայի հավաքականին: Եթե մերոնց հաջողվի հաղթել մրցակցին ու գրավել 2-րդ տեղը, ապա կարող են շարունակել պայքարը 73-80-րդ տեղերի համար:

Հայաստանի կանանց հավաքականը 0-3 հաշվով պարտվեց Իրանի թենիսիստուհիներին: 3-րդ խմբի K ենթախմբում ՀՀ հավաքականը 5 միավորով 5-րդ տեղում է: Վերջին խաղում հայ թենիսիստուհիները կմրցեն մեքսիկացիների հետ:

# Բռնցքամարտիկները պատրաստվում են Տրապիզոնի մրցաշարին



Արովյանի մարզաբազայում երկշաբաթյա ուսումնամարզական հավաք է սկսել բռնցքամարտի Հայաստանի ազգային հավաքականը: Գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանի գլխավորությամբ մեր բռնցքամարտիկները նախապատրաստվում են Թուրքիայի Տրապիզոն քաղաքում ապրիլի 13-22-ը կայանալիք օլիմպիական վարկանիշային մրցաշարին: Օլիմպիական ուղեգրերի համար ռինգ դուրս կգան հայ 7 բռնցքամարտիկներ:

Հավաքի ընթացքում մարզիչների գլխավոր խնդիրն իրենց սաների կամային եւ տեխնիկատակտիկական հատկանիշների հղկելն է: Արդեն որոշվել է, որ Հայաստանը ներկայացված չի լինելու մինչեւ 75 եւ մինչեւ 91 կգ քաշային կարգերում: Բանն այն է, որ մինչեւ 75 կգ քաշային կարգում հանդես եկող Անդրանիկ Հակոբյանն արդեն ունի Լոնդոնում հանդես գալու իրավունք: Իսկ օլիմպիական խաղերում յուրաքանչյուր քաշային կարգում միեւնույն երկրից միայն մեկ բռնցքամարտիկ կարող է հանդես գալ: Ինչ վերաբերում է մինչեւ 91 կգ քաշային կարգին, ապա այստեղ Հայաստանը չունի օլիմպիական ուղեգիր հավակնող բռնցքամարտիկ:

Հավաքականի գլխավոր մարզիչն արդեն կողմնորոշվել է որոշ բռնցքամարտիկների հարցում: Տրապիզոն մեկնողների ցանկում կլինեն Կորյուն Սողոմոնյանը (49 կգ), Հովհաննես Դանիելյանը (52 կգ), Արամ Ավագյանը (56 կգ), Վլադիմիր Սարուխանյանը (60 կգ), Հրայր Մաթեւոսյանը (69 կգ) եւ Արթուր Խաչատրյանը (81 կգ):

Հայաստանի հավաքականը Թուրքիա կուղեւորվի ապրիլի 13-ին: Երեւանից թիմն ավտոբուսով կմեկնի Թբիլիսի, որտեղից ինքնաթիռով կուղեւորվի Տրապիզոն:

# Ռեգբիստներին լուրջ փորձություն է սպասում

Ռեգբիի Հայաստանի հավաքականը նախապատրաստվում է Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Հավաքականի գլխավոր մարզիչ, ֆրանսահայ Լոռեն Հայրապետյանն ընտրական մրցաշարին նախապատրաստվելու նպատակով թիմում ընդգրկել է 25 ռեգբիստների: Հավաքականի հիմնական կորիզը կազմում են ֆրանսահայ ռեգբիստները: Հայաստանից հավաքականի կազմում ընդգրկվել է 7 ռեգբիստ:

Ընտրական մրցաշարը ՀՀ հավաքականը կսկսի ապրիլի 7-ին՝ հյուրընկալվելով Անդորրայի ընտրանուն: Մեկ շաբաթ անց Աբովյանի քաղաքային մարզադաշտում մեր ռեգբիստները կհյուրընկալեն Շվեյցարիայի հավաքականին: Ապրիլի 28-ին ՀՀ հավաքականի հյուրը կլինի Սերբիայի ընտրանին, իսկ մայիսի 12-ին հայ ռեգբիստները մրցակցի դաշտում կմրցեն Սլովենիայի հավաքականի հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***

*Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 18.03.2012 թ. որոշմամբ*

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«Թեքեյան կենտրոն»**

**Հիմնադրամի 2011 թ. գործունեության մասին**

**1. Հիմնադրամի լրիվ անվանումը`** «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամ

1.1 Գրանցման համարը` 172

1.2 Գրանցման ամսաթիվը`12.01.01թ.

1.3 Իրավաբանական հասցեն, ք. Երեւան, Խանջյան 50

1.4 Գործունեության հասցեն, ք. Երեւան, Խանջյան 50

1.5 հեռ. 57-78-45

1.6 www.tekeyancentre.am

1.7 tcentre@arminco.com

Ֆինանսական տարում Հիմնադրամի տնօրենը, Հոգաբարձուների խորհրդի անդամները, աշխատակազմը չեն օգտվել Հիմնադրամի միջոցներից:

**5. Իրականացված ծրագրեր`**

1. Օլիմպիադա 772 հազ. դրամ
2. Էքսկուրսիա 321 հազ. դրամ
3. Ամառային ճամբար 6,102 հազ. դրամ
4. Մրցարշավ 2,015 հազ. դրամ
5. Դասագրքեր 1,633 հազ. դրամ
6. Օժանդակություն Հայաստանի Թեքեյան Մշակութային Միավորմանը 131 հազ. դրամ, անվճար մատուցած ծառայությունների տեսքով 1,024 հազ. դրամ

**6. Ֆինանսական աղբյուրները`**

1. Հիմնադրամի գույքի վարձակալություն
2. Անհատ նվիրատուներ

USD- 8.800 $
EUR- 1.000 €
STG- 5.049 £
CHF- 100 ₣

**7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը` 57,686 հազ. դրամ**

7.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը` 10,974 հազ. դրամ

**Անվճար մատուցած ծառայությունների տեսքով 1,024 հազ. դրամ**

**8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի**

**Անուն, ազգանունը (անվանումը):**

Հիմնադրամի 2011թ. աուդիտն իրականացրել է «Լոնդոն Գրուպ» աուդիտորական ընկերությունը:

**9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը (թերթերի քանակը) թերթից**

Հիմնադրամի տնօրեն` Արմեն Ծուլիկյան

Գլխավոր հաշվապահ` Անահիտ Հարությունյան

### ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Թեքեյան կենտրոն» Հիմնադրամի*
*Հոգաբարձուների խորհրդին*

Մեր կողմից իրականացվել է «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ` Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական քաղաքականությունը եւ այլ ծանոթություններ:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք աուդիտի ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները եւ պլանավորել եւ անցկացնել աուդիտը` ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առակայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր` ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ` մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը` համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

***Աուդիտի ղեկավար` Գառնիկ Ալեքսանյան***

***Տնօրեն` Տիգրան Ջորյան***

26 մարտի, 2012 թ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի թիվ 1 արձանագրությամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՌՑ-ՊԸԾՁԲ 12/3***

Պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանալու 01.01.2011թ. դրությամբ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության անշարժ գույքի (շենք-շինություններ, հողամասեր) շուկայական արժեքի որոշման ծառայության ձեռքբերումը:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել անշարժ գույքի (շենք-շինություններ, հողամասեր) շուկայական արժեքի որոշման ծառայության ձեռքբերման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2012 թվականի հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ վերոհիշյալ հասցեով, վարչական շենքի 19 սենյակ մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 9-րդ օրացուցային օրվա ժամը 14:00-ն: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ վերոհիշյալ հասցեով, վարչական շենքի 19 սենյակ մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն: Հայտերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ***

Երեւանի "Ադամանդ" Ապրանքա-Հումքային Բորսան իր հարթակում իրականացնում է "ԱրմենՏել" ՓԲԸ–ի կողմից ներկայացված` Մասիսի եւ Թումանյանի շրջանների ԳՄԿ–ների, ԱՀԿ-ների, ինչպես նաեւ էներգահամակարգերի, տրանսմիսիաների, դետալների, սարքերի, սարքավորումների եւ այլ գույքի աճուրդային վաճառք:

Գույքի ամբողջ ցանկին ծանոթանալու, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել +(37410) 565228 կամ այցելել Բորսա` ք. Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցե, կամ www.borsa.am :

**Տարեկան հաշվետվություն 2011 թ.** *«Ազգ օրաթերթ» ՍՊԸ*

| | |
|---|---|
| Համախառն եկամուտ (դրամներով) | |
| այդ թվում` | |
| Արտադրանքի իրացումից հասույթ | 14.834.451 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 17.475.990 |
| Սուբսիդիա | 750.000 |
| Ընդամենը | 33.060.441 |
| Համախառն ծախսեր (դրամներով) | |
| այդ թվում` | |
| Վարչական | 23.255.507 |
| Արտադրական | 9.804.934 |
| Ընդամենը | 33.060.441 |

***Տնօրենություն***

## Հայտարարություն

Ս. թ. մարտի 30-ին, ժամը 12.00-ին ՀՀ Շիրակի մարզի Տուֆաշենի գյուղապետարանում տեղի կունենան «Սամվել Լաբլաջյան» ԱՁ-ի կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Կոմիտասի 29 հասցեում, կամ Տուֆաշենի գյուղապետարանում, հեռ. 220218, 221485, 221568:

# «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ն

**հայտարարում է աճուրդ-վաճառք ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառվող ոչ ընթացիկ ակտիվների եւ նյութական արժեքների հետեւյալ անվանացանկով:**

**Աճուրդ-վաճառքը կկայանա յուրաքանչյուր անվանումն առանձին լոտով 17.04.2012 թ.-ի, ժամը 14:00-ին:**
**Հասցե` Տավուշի մարզ, գ. Հաղթանակ. «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի վարչական շենք:**
**Դիմումները կարող են ներկայացնել մինչեւ 16.04.2012 թ., ժամը 14:00-ն:**
**Տեղեկությունների համար դիմել հետեւյալ հեռախոսահամարներով.**
**099 06 27 22, 091 72 74 96**

| հ/հ ը/կ | Գույքի անվանումը /մակնիշը/ | Շահագործման տարեթիվը | քանակը հաշվառմամբ հատ | Առաջարկվող արժեք /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 6 | 11 |
| 1 | Ա/մեքենա ՄԱԶ- 4502, 89-30 | 1989 | 1 | 370000 |
| 2 | Ա/մեքենա ՍԱԶ-3507 | 1990 | 1 | 300000 |
| 3 | Ա/մեքենա ԳԱԶ-6611 | 1986 | 1 | 170000 |
| 4 | Ա/մեքենա ՈՒԱԶ-452Դ | 1980 | 1 | 80000 |
| 5 | Ա/ցիստեռն ԱՑ-4.2 | 1981 | 1 | 150000 |
| 6 | Ավտոբուս ԿԱՎԶ-685 | 1986 | 1 | 190000 |
| 7 | Էքսկավատոր ԷՕ-2621 | 1985 | 1 | 270000 |
| 8 | Ա/մեքենա ՍԱԶ-3507 | 1985 | 1 | 240000 |
| 9 | Մոտոռոլեր ՏԳԱ-200 | 1978 | 1 | 5000 |
| 10 | Մոտոռոլեր ՏԳԱ-200 | 1978 | 1 | 5000 |
| 11 | Ա/մեքենա ԻԺ-2715 | 1988 | 1 | 125000 |
| 12 | Մոտոցիկլետ ԻԺ-J-4 | 1982 | 1 | 5000 |
| 13 | Կցասայլ տրակտորի 1ՊՏՍ-2Մ | 1988 | 1 | 15000 |
| 14 | Կցասայլ տրակտորի 2ՊՏՍ-4Մ | 1987 | 1 | 25000 |
| 15 | Կոմպրեսոր ԶԻՖ-5593 | 1987 | 1 | 40000 |
| 16 | Ա/մեքենա ՄԱԶ-5337 | 1991 | 1 | 300000 |
| 17 | Ա/մեքենա ԳԱԶ-5312 | 1988 | 1 | 140000 |
| 18 | Տրակտոր ՄՏԶ-82L | 1987 | 1 | 250000 |
| 19 | Տրակտոր ՄՏԶ-82L | 1987 | 1 | 250000 |
| 20 | Վագոն տնակ `Ստավրապոլեց' | 1992 | 1 | 10000 |
| 21 | Ա/մեքենա ԳԱԶ-5312 | 1989 | 1 | 160000 |
| 22 | Ա/մեքենա ԳԱԶ-5312 | 1988 | 1 | 120000 |
| 23 | Ա/մեքենա ԳԱԶ-5201 | 1982 | 1 | 80000 |
| 24 | Ա/մեքենա ԿՍ -2571Ա | 1989 | 1 | 900000 |
| 25 | Խառատային հաստոց 16E16KP | 1990 | 1 | 57000 |
| 26 | Եռակցման տրանս. ՏԴՄ-503 | 1985 | 1 | 5000 |
| 27 | Գայլիկոնման հաստոց Մ-118Ա | 1975 | 1 | 30000 |
| 28 | Փայտամշակման հաստոց | 1975 | 1 | 10000 |
| 29 | Տրանսֆորմատոր | 1963 | 1 | 15000 |
| 30 | Դրսի էլ.լուսավորություն | 1963 | 1 | 17500 |
| 31 | Դրսի էլ.լուսավորություն | 1963 | 1 | 35000 |
| 32 | Կոնտակտոր | 1963 | 2 | 5000 |
| 33 | Անջատիչ ներքին տեղակայմամբ | 1963 | 1 | 10000 |
| 34 | Փական | 1983 | 3 | 63000 |
| 35 | Հետադարձ փական | 1983 | 3 | 36000 |
| 36 | Էլ. եռակցման տրանսֆորմատոր | 1988 | 1 | 10000 |
| 37 | Պողպատյա փական | 1973 | 3 | 84000 |
| 38 | Էլ. սնուցման գծի փայտյա հենասյուն | 1973 | 20 | 38400 |
| 39 | Պողպատյա փական | 1973 | 3 | 63000 |
| 40 | Համակարգիչ | 2000 | 1 | 10000 |
| 41 | Բեռնատար ԳԱԶ -ՍԱԶ-3507 | 1988 | 1 | 270000 |
| 42 | Ավտոցիստեռն M3-3607 | 1984 | 1 | 63000 |
| 43 | Բեռնատար ՄԱԶ -5549 | 1990 | 1 | 350000 |
| 44 | Բեռնատար ՈՒԱԶ -3303-01 | 1988 | 1 | 145000 |
| 45 | Հատուկ ԱՑ -3613 | 1990 | 1 | 86000 |
| 46 | Էլ զոդման ապարատ | 1990 | 1 | 15000 |
| 47 | Էքսկավատոր ԷՕ -2621 | 1990 | 1 | 350000 |
| 48 | Բեռնատար ԳԱԶ -66-11 | 1991 | 1 | 200000 |
| 49 | Շարժական ջրհան կայան | 1991 | 1 | 11000 |
| 50 | Տրակտոր D3-162-3 | 1991 | 1 | 280000 |
| 51 | Տրակտոր MT3-80 | 1983 | 1 | 200000 |
| 52 | Ավտոկռան KC-1562 | 1983 | 1 | 300000 |
| 53 | Եռաֆազ հաշվիչ | 2000 | 1 | 5000 |
| 54 | Եռաֆազ հաշվիչ ՍՏԷՄ -100Ա | 2000 | 1 | 5000 |
| 55 | Եռաֆազ հաշվիչ | 2000 | 1 | 5000 |
| 56 | Եռաֆազ հաշվիչ ՍՏԷՄ -100Ա | 2000 | 1 | 5000 |
| 57 | Ավազան մ/ բետոն | 1983 | 1 | 360000 |
| 58 | Պոմպ 3B 200*4 | 1977 | 1 | 50000 |
| 59 | Հակադարձ կափյուռ d=300մմ | 1977 | 2 | 14000 |
| 60 | Փական d=300մմ պողպատ | 1977 | 2 | 20000 |
| 61 | Էլ շարժիչ A3315S1-4Y3 | 1963 | 1 | 50000 |
| 62 | Էլ շարժիչ A-113-4 | 1977 | 1 | 60000 |
| 63 | Էլ շարժիչ A-13-59-4 | 1977 | 2 | 200000 |
| 64 | Մոտեցնող ջրանցք մ/բ | 1971 | 1 | 400000 |
| 65 | Ջրընդունիչ հոր մ/բ | 1971 | 1 | 20000 |
| 66 | Ջրչափ հոր մ/բ | 1971 | 1 | 20000 |
| 67 | Լվացման տղմազտարան մ/բ | 1971 | 1 | 170000 |
| 68 | Ջրթափ ընդունող հորով | 1971 | 1 | 20000 |
| 69 | Կամուրջ պատնեշի վրա մ/բ | 1971 | 1 | 12000 |
| 70 | Ջրաչափ պատնեշ մ/բ | 1971 | 1 | 380000 |
| 71 | Գլխամասային մոտեցնող ջրանցք | 1971 | 1 | 920000 |
| 72 | Էլ շիթ Բարձր լարման բաշխիչ վահան KPYH KXII | 1971 | 8 | 376000 |
| 73 | Տրանսֆ ենթակայան TM -400 | 1963 | 1 | 240000 |
| 74 | Էլ շարժիչ A3315S1-4Y3 | 1963 | 1 | 10000 |
| 75 | Այգեձորի N4ջրհան կայանի պոմպ ՑՆՍ -180/170 | 1963 | 1 | 38000 |
| 76 | Հակադարձ փական պողպատյա d=200մմ | 1963 | 1 | 5500 |
| 77 | Փական պողպատ | 1963 | 2 | 16000 |
| 78 | Փական չուգունե | 1963 | 2 | 6000 |
| 79 | Էլ շարժիչ A-2-81-2 | 1963 | 1 | 27000 |
| 80 | Չինարիի N2 ջ/կ-նի պոմպ -ՑՆՍ-60-264 | 1963 | 1 | 20000 |
| 81 | Հակադարձ փական պողպատ | 1963 | 1 | 5000 |
| 82 | Փական պողպատ | 1963 | 2 | 5000 |
| 83 | Հիդրոպոմպ | 1990 | 1 | 500000 |
| 84 | Պոմպ հորիզոնական | 1969 | 2 | 70000 |
| 85 | Էքսկավատոր Է-4121Բ | 1987 | 1 | 10000 |
| 86 | Էքսկավատոր Է-4121Բ | 1988 | 1 | 10000 |
| 87 | Համակարգիչ Պենտիում 2 | 2000 | 1 | 10000 |
| 88 | Էլչափիչ սարքեր-հաշվիչ | 1989 | 1 | 14500 |
| 89 | Վակում պոմպՎՎՆ-1.0 | 1989 | 1 | 5500 |
| 90 | Էլավտ անջատիչ 630Ա.ԿՏ35 | 1989 | 2 | 5000 |
| 91 | Էլ.կոնտակտոր ԿՏ-35 | 1989 | 1 | 5000 |
| 92 | Փական | 1990 | 2 | 28000 |
| 93 | Ղուռսալի N 2 պ/կ | 1989 | 2 | 16000 |
| 94 | Փական | 1989 | 2 | 16000 |
| 95 | Սարալի N 1 պ/կ | 1989 | 2 | 16000 |
| 96 | Էլ.շարժ 160կՎՏ 1500պտ/ր, 400Վ Ա102-4 | 1989 | 2 | 11200 |
| 97 | Ղուռալիի N1 պ/կ Վագոն տնակ` պատրաստված սենդվիչներ | 1989 | 1 | 10000 |
| 98 | Հակադարձ կափյուր դ-250 | | 2.00 | 10000 |
| 99 | Հակադարձ կափյուր դ-300 | | 6.00 | 30000 |
| 100 | Հակադարձ կափյուր դ-60 | | 1.00 | 5000 |
| 101 | Փական դ-20մմ | | 2.00 | 2000 |
| 102 | հակադարձ փական դ-200 | | 2.00 | 10000 |
| 103 | Վեր.պոմպ ՑՆՍ240 | | 1.00 | 60000 |
| 104 | Վեր.պոմպ ՑՆՍ 300-120 | | 2.00 | 150000 |
| 105 | վերանորոգման պոմպ | | 2.00 | 80000 |
| 106 | Բանվորական անիվ 363*200*400 | | 2.00 | 10000 |
| 107 | Բանվորական անիվ 313*200*4 | | 2.00 | 10000 |
| 108 | Բանվորական անիվ 103*44 | | 3.00 | 15000 |
| 109 | Բանվորական անիվ 20*76 | | 4.00 | 20000 |
| 110 | Երկաթյան թմբուկ | | 1.00 | 5000 |
| 111 | Կռանի հեծան | | 1.00 | 7000 |
| 112 | Գրասեղան | | 2.00 | 10000 |
| 113 | Երկաթ բետոնե կոնստրուկցիա խ.մ | | 3.00 | 15000 |
| 114 | ջրթող 480 | | 10.00 | 32000 |
| 115 | Ջրթող 500/610 | | 10.00 | 36000 |
| 116 | Ուժային տրանսֆորմատոր 3Մ-250 | | 1.00 | 20000 |
| 117 | Ուժային տրանսֆորմատոր 1000/10 | | 1.00 | 25000 |
| 118 | Աթոռ | | 30.00 | 30000 |
| 119 | ԿՏՊՏՄ 6.0160կվ | | 1.00 | 6250 |
| 120 | Տրանսֆորմատոր ցածր լարման | | 1.00 | 5000 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 28.3.2012, գինը` 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: